



## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք  
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,  
info@vanadzor.am

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ

25 դեկտեմբերի 2023 թվականի N 1979

ԱՐԱՅԻԿ ՌԱՖԻԿԻ ՂՈՒԿԱՍՅԱՆԻՆ ԲՆԱԿՄԱԿԵՐԵՍ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ԵՎ  
ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 02-Ի ԹԻՎ  
152 ՈՐՈՇՈՒՄՆ ՌԻԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Վանաձոր համայնքի Տավրոսի 6 փողոց թիվ 35 տան բնակիչ Արայիկ Ռաֆիկի Ղուկասյանի դիմումը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածով՝ որոշում եմ.

- Արայիկ Ռաֆիկի Ղուկասյանին (ծնվ. 1969թ.) հատկացնել ժամանակավոր բնակմանը՝ Ռիսանողական փողոցի թիվ 14 հանրակացարանի թիվ 410 սենյակը:
- Ուժը կորցրած ճանաչել Վանաձոր համայնքի ղեկավարի 2021 թվականի փետրվարի 02-ի թիվ 152 «Էլմիրա Հայկազի Եգանյանին բնակմանը հատկացնելու և Վանաձորի քաղաքային համայնքի ղեկավարի 2015թ.-ի հոկտեմբերի 21-ի թիվ 1689-Ա որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին» որոշումը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ  
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2023թ. դեկտեմբերի 25  
Ք. Վանաձոր



## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք  
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,  
info@vanadzor.am

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ

25 դեկտեմբերի 2023 թվականի N 1980

ՎԱՆԱԶՈՐ ՔԱՂԱՔԻ ՄՅԱՍՆԻԿՅԱՆ ՓՈՂՈՑ 18/7 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ,  
ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՃԱՆԱՀՎԱԾ ԱՎՏՈՏՆԱԿԸ ԵՎ  
ԴՐԱՆՈՎ ԶԲԱՂԵՑՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԸ ՄԵՐՈՒԺԱՆ ԿՈԼԻԿԻ  
ՄԱՆՈՒԶԱՐՅԱՆԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Մերութան Կոլիկի Մանուչարյանի 09.09.2022թ. թիվ 10846 դիմումը, Վանաձոր համայնքի անվամբ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 08112023-06-0006 վկայականը, 26.04.2023թ. Վանաձոր համայնքի ավագանու թիվ 33 որոշումը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 34.2-րդ կետով և 35-րդ կետի դ) և ե) ենթակետերով՝ **որոշում եմ.**

1. Վանաձոր քաղաքի Մյասնիկյան փողոց 18/7 հասցեում գտնվող, Վանաձոր համայնքի սեփականությունը ճանաչված 10.35քմ արտաքին մակերեսով (ներքին մակերեսը՝ 7.52քմ) ավտոտնակը 33190 (երեսուներեք հազար հարյուր իննսուն) դրամով և դրանով զբաղեցված ու սպասարկման համար անհրաժեշտ, ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի թվին չդասվող 10.35քմ մակերեսով հողամասը 167430 (հարյուր վաթսուներեք հազար չորս հարյուր երեսուն) դրամով, ուղղակի վաճառքի ձևով օտարել Մերութան Կոլիկի Մանուչարյանին:

2. Վանաձորի համայնքի ղեկավարին՝ Մերութան Կոլիկի Մանուչարյանի հետ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կնքել ավտոտնակի և հողամասի առուվաճառքի պայմանագիր, իսկ աշխատակազմի եկամուտների հաշվառման, հավաքագրման և գովազդի բաժնին հաշվառել վերոնշյալ պայմանագիրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ  
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2023թ. դեկտեմբերի 25  
ք. Վանաձոր



## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք  
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,  
info@vanadzor.am

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ

25 դեկտեմբերի 2023 թվականի N1981

ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔ ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՏԱՐՈՆ-3 6-ՐԴ ԹԱՂԱՄԱՍ 3/1  
ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ՀՈՂԱՄԱՍԻ ԸՆԴՀԱՅՆՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ  
ԱՇՈՏ ԳՐԻԳՈՐԻ ՔՈՉԱՐՅԱՆԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Աշոտ Գրիգորի Քոչարյանի 22.08.2023թ. թիվ 02/14321 դիմումը, Վանաձոր համայնքի անվամբ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 04022021-06-0007 և Աշոտ Գրիգորի Քոչարյանի անվամբ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 17092020-06-0049 վկայականները, 29.11.2023թ. Վանաձոր համայնքի ավագանու թիվ 47 որոշումը, ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ և 8-րդ կետերով, 12.04.2022թ. «ՀՀ հողային օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» ընդունած ՀՕ 93-Ն ՀՀ օրենքով՝ **որոշում եմ**.

1. Վանաձոր համայնք Վանաձոր քաղաքի Տարոն-3 6-րդ թաղամաս 3/1 հասցեում գտնվող, ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի թվին չդասվող, Վանաձոր համայնքի սեփականություն հանդիսացող 826.6քմ մակերեսով հողամասը, համաձայն Վանաձոր համայնքի անվամբ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 04022021-06-0007 վկայականի, հողի կադաստրային արժեքով՝ 3671600 (երեք միլիոն վեց հարյուր յոթանասունմեկ հազար վեց հարյուր) դրամով, ուղղակի վաճառքի ձևով օտարել Աշոտ Գրիգորի Քոչարյանին՝ հողամասի ընդլայնման նպատակով:

2. Վանաձոր համայնքի ղեկավարին՝ Աշոտ Գրիգորի Քոչարյանի հետ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կնքել 826.6քմ մակերեսով հողամասի առուվաճառքի պայմանագիր, իսկ համայնքի աշխատակազմի եկամուտների հաշվառման, հավաքագրման և գովազդի բաժնին հաշվառել վերոնշյալ պայմանագիրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ  
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



Ա. ՓԵԼԵՇՅԱՆ



## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք  
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.ori@mta.gov.am,  
info@vanadzor.am

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ

25 դեկտեմբերի 2023 թվականի N1982

ՀԱՄԱՅՆՔ ՎԱՆԱՁՈՐ, ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ Վ. ՏԵՐՅԱՆ ՓՈՂՈՅ ԹԻՎ 14/1  
ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ  
ՃԱՆԱԶՎԱԾ ՏԱՂԱՎԱՐԸ ԵՎ ԴՐԱՆՈՎ ԶԲԱՂԵՑՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԸ ԱՐՄԵՆ  
ՍԱՄՎԵԼԻ ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Արմեն Սամվելի Թադևոսյանի 17.11.2022թ. թիվ 02/15385 դիմումը, Վանաձոր համայնքի անվամբ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 24112023-06-0072 վկայականը, 26.04.2023թ. Վանաձոր համայնքի ավագանու թիվ 33 որոշումը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 33.1-րդ կետի բ) ենթակետով, 34-րդ, 34.2-րդ կետերով, 35-րդ կետի դ) և գ) ենթակետերով՝ **որոշում եմ.**

1. Համայնք Վանաձոր Վանաձոր քաղաքի Վ. Տերյան փողոց 14/1 հասցեում գտնվող, Վանաձոր համայնքի սեփականությունը ճանաչված 9.3քմ արտաքին մակերեսով (ներքին մակերեսը՝ 8.22քմ) տաղավարը 29820 (քսանինը հազար ութ հարյուր քսան) դրամով և դրանով զբաղեցված ու սպասարկման համար անհրաժեշտ, ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի թվին չդասվող 61.3քմ մակերեսով հողամասը կադաստրային արժեքով՝ 991630 (ինը հարյուր իննսունմեկ հազար վեց հարյուր երեսուն) դրամով, ուղղակի վաճառքի ձևով օտարել Արմեն Սամվելի Թադևոսյանին:

2. Վանաձորի համայնքի ղեկավարին՝ Արմեն Սամվելի Թադևոսյանի հետ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կնքել տաղավարի և հողամասի առուվաճառքի պայմանագիր, իսկ աշխատակազմի եկամուտների հաշվառման, հավաքագրման և գովազդի բաժնին հաշվառել վերոնշյալ պայմանագիրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ  
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



Ա. ՓԵԼԵՇՅԱՆ



## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք  
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.ori@mta.gov.am,  
info@vanadzor.am

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ

25 դեկտեմբերի 2023 թվականի N1983

ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 26-Ի  
ԹԻՎ 1502 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Սվետլանա Ալավերդյանի դիմումը, Վանաձոր համայնքի ղեկավարի 26 հոկտեմբերի 2023 թվականի թիվ 1502 որոշումը, ԳԱՍՊԱՐ ՎԵՔԻԼՅԱՆ ԱԶ-ի կողմից տրված հողամասի, շինությունների նոր հատակագիծը, շինությունների բնութագիրը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝  
**որոշում եմ.**

Վանաձոր համայնքի ղեկավարի 26 հոկտեմբերի 2023 թվականի «Վանաձոր համայնք Վանաձոր քաղաքի, Տարոն-4 Մեքենաշինարարների թաղամաս 41/1-8/3 և Տարոն-4 թաղամաս Մեքենաշինարարների 41/1-8/1 հասցեներում գտնվող Սվետլանա Վարանցովի Ալավերդյանին սեփականության իրավունքով պատկանող հողամասերը և շինությունը որպես մեկ գույքային միավոր միավորելու և փոստային հասցե տրամադրելու մասին» թիվ 1502 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1. Որոշման 1-ին կետում «52,92քմ» բառերը փոխարինել «52,53քմ» բառերով:
2. Վանաձոր համայնքի ղեկավարի 26 հոկտեմբերի 2023 թվականի թիվ 1502 որոշման հավելվածը փոխարինել Վանաձոր համայնքի ղեկավարի կողմից հաստատված նոր հավելվածով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ  
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2023թ. դեկտեմբերի 25  
ք.Վանաձոր



## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱԾՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք  
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 [vanadzor.ori@mta.gov.am](mailto:vanadzor.ori@mta.gov.am),  
[info@vanadzor.am](mailto:info@vanadzor.am)

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ

25 դեկտեմբերի 2023 թվականի N 1984

ՎԱՆԱԾՈՐ ՔԱՂԱՔԻ ԿՆՈՒՆՅԱՆՑ ՓՈՂՈՑ ԹԻՎ 46 ՇԵՆՔԻ  
ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՄԲ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՄԵՏԱՂԱԿԱՆ ԱՎՏՈՏՆԱԿԻ  
ԵՎ ԴՐԱՆՈՎ ԶԲԱՂԵՑՎԱԾ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ  
ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԱՆԱԾՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ  
ՃԱՆԱԶԵԼՈՒ, ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ,  
ԱՎՏՈՏՆԱԿԸ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ  
ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հերիքնազ Սարգսի Սիմոնյանի 03.10.2022թ. թիվ 12158 դիմումը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը /62593/, հանրային ծառայություններ մատուցող կազմակերպությունների եզրակացությունները, «Վանաձորի նախագծող» ՍՊԸ-ի կողմից 26.09.2023թ. տրված շինությունների տեխնիկական վիճակի վերաբերյալ թիվ ՎՆ1-75/23ա եզրակացությունը, Արսեն Իսահակյան Ռուդիկի ԱԶ-ի կողմից տրված հողամասի և շինությունների հատակագծերը, շինությունների բնութագիրը, ՀՀ կադաստրի կոմիտեի կողմից 24.10.2022 թվականին տրված հաշվառման (չափագրման) տվյալների մուտքագրման տեղեկանքը (չափագրման տվյալների մուտքագրման ծածկագիր: 20222AV4TJ), Վանաձոր համայնքի ավագանու թիվ 33 որոշումը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 731-Ն որոշմամբ հաստատված կարգով, ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 33-րդ կետով, ՀՀ հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 8-րդ հոդվածի 1-ին մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 14<sup>3</sup>-րդ հոդվածի 11, 12, 13, 14 մասերով, ՀՀ կառավարության 2021թ. փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով՝ **որոշում եմ.**

1. Ճանաչել Վանաձոր համայնքի սեփականության իրավունքը Վանաձոր քաղաքի Կնունյանց փողոց թիվ 46 շենքի հարևանությամբ ինքնակամ կառուցված, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված օրինականացման պայմաններին համապատասխանող 32.52քմ արտաքին (ներքին՝ 30.24քմ) մակերեսով մետաղական ավտոտնակի և դրանով զբաղեցված ու սպասարկման համար անհրաժեշտ, ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի թվին չդասվող 26.22քմ մակերեսով հողամասի նկատմամբ՝ համաձայն հատակագծի:

2. Փոխել Վանաձոր համայնքի Կնունյանց փողոց թիվ 46 շենքի հարևանությամբ գտնվող 0.002622հա մակերեսով հողամասի գործառնական նշանակությունը՝ բնակավայրերի

այլ հողերից՝ բնակելի կառուցապատման հողերի:

3. Ճանաչել օրինական սույն որոշման 1-ին կետում նշված բնակելի գործառնական նշանակությամբ ինքնակամ կառույցը:

4. Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հավաքագրման, հաշվառման և գովազդի բաժնին՝ 5-օրյա ժամկետում դիմել ՀՀ կադաստրի կոմիտեի Լոռու մարզային ստորաբաժանում՝ սույն որոշման 1-ին կետում նշված ինքնակամ կառուցված մետաղական ավտոտնակի և դրանով զբաղեցված ու սպասարկման համար անհրաժեշտ հողամասի նկատմամբ համայնքի սեփականության իրավունքի պետական գրանցում կատարելու համար:

5. Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության բաժնի պետ-գլխավոր ճարտարապետ Ս. Աբովյանին՝ սույն որոշման 1-ին կետում նշված գույքի նկատմամբ համայնքի սեփականության իրավունքի գրանցումից հետո 15 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր առաջարկել սույն որոշման 1-ին կետում նշված շինության ինքնակամ կառուցումը իրականացրած անձին մետաղական ավտոտնակը և հողամասը ուղղակի վաճառքի ձևով օտարելու վերաբերյալ:

6. Վանաձոր քաղաքի Կնունյանց փողոց թիվ 46 շենքի հարևանությամբ գտնվող ավտոտնակին տրամադրել փոստային հասցե՝ Վանաձոր համայնք, Վանաձոր ք., Բ. Կնունյանց փողոց, 46/18 ավտոտնակ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ  
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2023թ. դեկտեմբերի 25  
ք.Վանաձոր



## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք  
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,  
info@vanadzor.am

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ

25 դեկտեմբերի 2023 թվականի N1985

ՎԱՆԱԶՈՐ ՔԱՂԱՔԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՓՈՂՈՑ ԹԻՎ 11 ՇԵՆՔԻ ԲԱԿՈՒՄ  
ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՄԵՏԱՂԱԿԱՆ ԱՎՏՈՏՆԱԿԻ ԵՎ ԴՐԱՆՈՎ  
ԶԲԱՂԵՑՎԱԾ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՀՈՂԱՄԱՍԻ  
ՆԿԱՏՄԱՄԲ ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՃԱՆԱԶԵԼՈՒ,  
ԱՎՏՈՏՆԱԿԸ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ  
ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Ռուբիկ Վազգենի Բարսեղյանի 08.11.2022թ. թիվ 14701 դիմումը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը /64052/, հանրային ծառայություններ մատուցող կազմակերպությունների եզրակացությունները, Արսեն Իսահակյան Ռուդիկի ԱԶ-ի կողմից տրված հողամասի և շինությունների հատակագծերը, շինությունների բնութագիրը, ՀՀ կադաստրի կոմիտեի կողմից 15.11.2022 թվականին տրված հաշվառման (չափագրման) տվյալների մուտքագրման տեղեկանքը (չափագրման տվյալների մուտքագրման ծածկագիր: 2022H84UHT), 23.10.2023թ. «Վանաձորի նախագծող» ՍՊԸ-ի կողմից տրված շինությունների տեխնիկական վիճակի վերաբերյալ թիվ ՎՆ1-93/23 ա եզրակացությունը, 26.04.2023թ. Վանաձոր համայնքի ավագանու թիվ 33 որոշումը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 731-Ն որոշմամբ հաստատված կարգով, ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 33-րդ կետով, ՀՀ կառավարության 2021թ. փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով՝ **որոշում եմ.**

1. Ճանաչել Վանաձոր համայնքի սեփականության իրավունքը Վանաձոր քաղաքի Թումանյան փողոց թիվ 11 շենքի բակում ինքնակամ կառուցված, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված օրինականացման պայմաններին համապատասխանող 27.37քմ արտաքին (ներքին մակերեսը՝ 26.21քմ) մակերեսով մետաղական ավտոտնակի և դրանով զբաղեցված ու սպասարկման համար անհրաժեշտ, ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի թվին չդասվող 27.37քմ մակերեսով հողամասի նկատմամբ՝ համաձայն հատակագծի:
2. Ճանաչել օրինական սույն որոշման 1-ին կետում նշված բնակելի գործառնական նշանակությամբ ինքնակամ կառույցը:
3. Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հավաքագրման, հաշվառման և գովազդի բաժնին՝ 5-օրյա ժամկետում դիմել ՀՀ կադաստրի կոմիտեի Լոռու մարզային ստորաբաժանում՝ սույն որոշման 1-ին կետում նշված ինքնակամ կառուցված մետաղական ավտոտնակի և դրանով զբաղեցված ու սպասարկման համար անհրաժեշտ

հողամասի նկատմամբ համայնքի սեփականության իրավունքի պետական գրանցում կատարելու համար:

4. Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության բաժնի պետ-գլխավոր ճարտարապետ Ս. Աբովյանին՝ սույն որոշման 1-ին կետում նշված գույքի նկատմամբ համայնքի սեփականության իրավունքի գրանցումից հետո 15 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր առաջարկել սույն որոշման 1-ին կետում նշված շինության ինքնական կառուցումը իրականացրած անձին մետաղական ավտոտնակը և հողամասը ուղղակի վաճառքի ձևով օտարելու վերաբերյալ:

5. Վանաձոր քաղաքի Թումանյան փողոց թիվ 11 շենքի բակում մասում գտնվող ավտոտնակին տրամադրել փոստային հասցե՝ Վանաձոր Վանաձոր ք., Հ. Թումանյան փողոց, 11/149 ավտոտնակ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ  
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2023թ. դեկտեմբերի 25  
ք. Վանաձոր



## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք

Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,  
info@vanadzor.am

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ

25 դեկտեմբերի 2023 թվականի N 1986

ՎԱՆԱԶՈՐ ՔԱՂԱՔԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՓՈՂՈՑ 7-9 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ,  
ՆԱՐԵԿ ՆԻԿՈԼԱՅԻ ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ  
ՊԱՏԿԱՆՈՂ ԱՎՏՈՏՆԱԿԻ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՀՈՂԱՄԱՍԸ ՆԱԽԱՊԱՏՎՈՒԹՅԱՆ  
ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ, ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ՇԻՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ  
ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՓՈԽԵԼՈՒ ԵՎ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ  
ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Նարեկ Նիկոլայի Մանուչարյանի 15.11.2022 թվականի թիվ 15253 դիմումը, 26.04.2023թ. Վանաձոր համայնքի ավագանու թիվ 33 որոշումը, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 13022014-06-0023 վկայականը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը /72338/, ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ, 4-րդ կետերով և 2-րդ մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ կառավարության 2002թ. փետրվարի 02-ի թիվ 88 որոշումով, ՀՀ կառավարության 2021թ. փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով՝  
**որոշում եմ.**

1. Վանաձոր քաղաքի Թումանյան փողոց թիվ 7-9 հասցեում գտնվող, Նարեկ Նիկոլայի Մանուչարյանին սեփականության իրավունքով պատկանող ավտոտնակի զբաղեցրած, ՀՀ Լոռու մարզի Վանաձոր քաղաքի գլխավոր հատակագծի լրամշակման նախագծի համաձայն ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի թվին չդասվող 22.2քմ մակերեսով հողամասը, հողի կադաստրային արժեքով՝ 552530 (հինգ հարյուր հիսուներկու հազար հինգ հարյուր երեսուն) դրամով, նախապատվության իրավունքով, ուղղակի վաճառքի ձևով օտարել Նարեկ Նիկոլայի Մանուչարյանին:

2. Փոխել Վանաձոր քաղաքի Թումանյան փողոց 7-9 հասցեում գտնվող 0.0022հա մակերեսով հողամասի գործառնական նշանակությունը՝ հասարակական կառուցապատման հողերից՝ բնակելի կառուցապատման հողերի:

3. Փոխել Վանաձոր քաղաքի Թումանյան փողոց 7-9 հասցեում գտնվող 22.2քմ մակերեսով ավտոտնակի նպատակային նշանակությունը հասարակականից՝ որպես բնակելի:

4. Շինության գործառնական նշանակության փոփոխության համար շինարարության թույլտվություն չի պահանջվում:

5.Վանաձոր համայնքի ղեկավարին՝ Նարեկ Նիկողայի Մանուչարյանի հետ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կնքել ավտոտնակի և հողամասի առուվաճառքի պայմանագիր, իսկ համայնքի աշխատակազմի եկամուտների հավաքագրման, հաշվառման և գովազդի բաժնին հաշվառել վերոնշյալ պայմանագիրը:

6. Վանաձոր քաղաքի Թումանյան փողոց, 7-9 հասցեում գտնվող ավտոտնակին տրամադրել նոր փոստային հասցե՝ Վանաձոր համայնք, Վանաձոր ք., Հ. Թումանյան փողոց, 7/9 ավտոտնակ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ  
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2023թ. դեկտեմբերի 25  
ք.Վանաձոր



## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք

Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,  
info@vanadzor.am

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ

25 դեկտեմբերի 2023 թվականի N 1987

ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՇԻՐԱԿԱՑՈՒ ՓՈՂՈՑԻ ԱՐԵՎՄՏՅԱՆ ՄԱՍՈՒՄ ԳՏՆՎՈՂ  
ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԾԱԾԿԻ ԵՎ ԴՐԱՆՈՎ ԶԲԱՂԵՑՎԱԾ ՈՒ  
ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԱՆԱՁՈՐ  
ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՃԱՆԱԶԵԼՈՒ, ԾԱԾԿԸ  
ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՅԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Գիվի Էդիկի Համբարձումյանի 06.10.2022թ. թիվ 12456 դիմումը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը /60913/, հանրային ծառայություններ մատուցող կազմակերպությունների եզրակացությունները, 26.04.2023թ. Վանաձոր համայնքի ավագանու թիվ 33 որոշումը, Գասպար Վեքիլյան ԱԶ-ի կողմից տրված հողամասի և շինությունների հատակագծերը, շինությունների բնութագիրը, ՀՀ կադաստրի կոմիտեի կողմից 06.10.2022 թվականին տրված հաշվառման (չափագրման) տվյալների մուտքագրման տեղեկանքը (չափագրման տվյալների մուտքագրման ծածկագիր: 20225FWXXJ), ղեկավարվելով ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 731-Ն որոշմամբ հաստատված կարգով, «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 14<sup>3</sup>-րդ հոդվածի 11, 12, 13, 14 մասերով ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 33-րդ կետով, ՀՀ կառավարության 2021թ. փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով՝ **որոշում եմ.**

1. Ճանաչել Վանաձոր համայնքի սեփականության իրավունքը Վանաձոր քաղաքի Շիրակացու փողոցի արևմտյան մասում ինքնակամ կառուցված, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված օրինականացման պայմաններին համապատասխանող 30.0քմ մակերեսով ծածկի և դրանով զբաղեցված ու սպասարկման համար անհրաժեշտ, ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի թվին չդասվող 30.0քմ մակերեսով հողամասի նկատմամբ՝ համաձայն հատակագծի:
2. Փոխել Վանաձոր քաղաքի Շիրակացու փողոցի արևմտյան մասում գտնվող 0.0030 հա մակերեսով հողամասի գործառնական նշանակությունը՝ խառը կառուցապատման հողերից՝ բնակելի կառուցապատման հողերի:
3. Ճանաչել օրինական սույն որոշման 1-ին կետում նշված բնակելի գործառնական նշանակությամբ ինքնակամ կառույցը:
4. Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հավաքագրման, գույքի կառավարման և գովազդի բաժնին՝ 5-օրյա ժամկետում դիմել ՀՀ կադաստրի կոմիտեի Լոռու մարզային ստորաբաժանում՝ սույն որոշման 1-ին կետում նշված ինքնակամ կառուցված ծածկի և դրանով զբաղեցված ու սպասարկման համար անհրաժեշտ հողամասի նկատմամբ

համայնքի սեփականության իրավունքի պետական գրանցում կատարելու համար:

5. Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության բաժնի պետ-գլխավոր ճարտարապետ Ս. Աբովյանին՝ սույն որոշման 1-ին կետում նշված գույքի նկատմամբ համայնքի սեփականության իրավունքի գրանցումից հետո 15 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր առաջարկել սույն որոշման 1-ին կետում նշված շինության ինքնակամ կառուցումը իրականացրած անձին ծածկը և հողամասը ուղղակի վաճառքի ձևով օտարելու վերաբերյալ:

6. Վանաձոր քաղաքի Շիրակացու փողոցի արևմտյան մասում գտնվող ծածկին տրամադրել փոստային հասցե՝ Վանաձոր համայնք, Վանաձոր ք., Ա. Շիրակացու փողոց, 10/3 ծածկ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ  
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2023թ. դեկտեմբերի 25  
ք. Վանաձոր



## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք  
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,  
info@vanadzor.am

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ

25 դեկտեմբերի 2023 թվականի N 1988

ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՆԵՐՍԻՍՅԱՆ ՓՈՂՈՅ 1-ԻՆ ՆՐԲԱՆՑՔ ԹԻՎ 18 ՇԵՆՔԻ  
ԲԱԿՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՅՎԱԾ ԱՎՏՈՏՆԱԿԻ ԵՎ ԴՐԱՆՈՎ  
ԶԲԱՂԵՑՎԱԾ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՀՈՂԱՄԱՍԻ  
ՆԿԱՏՄԱՍԲ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՃԱՆԱԶԵԼՈՒ,  
ԱՎՏՈՏՆԱԿԸ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՓՈՍԱՅԻՆ ՀԱՍՅԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ  
ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Կարմեն Կարապետի Հովհաննիսյանի 19.09.2022թ. թիվ 11400 դիմումը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը/59462/, հանրային ծառայություններ մատուցող կազմակերպությունների եզրակացությունները, 24.07.2023թ. «Վանաձորի նախագծող» ՍՊԸ-ի կողմից տրված շինությունների տեխնիկական վիճակի վերաբերյալ թիվ ՎՆ1-51/23 ա եզրակացությունը, 26.04.2023թ. Վանաձոր համայնքի ավագանու թիվ 33 որոշումը, Արսեն Իսահակյան Ռուդիկի ԱՁ-ի կողմից տրված հողամասի և շինությունների հատակագծերը, շինությունների բնութագիրը, ՀՀ կադաստրի կոմիտեի կողմից 28.09.2022 թվականին տրված հաշվառման (չափագրման) տվյալների մուտքագրման տեղեկանքը (չափագրման տվյալների մուտքագրման ծածկագիր: 2022NYPRNP), ղեկավարվելով ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 731-Ն որոշմամբ հաստատված կարգով, ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 33-րդ կետով, ՀՀ կառավարության 2021թ. փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով՝ **որոշում եմ.**

1. Ճանաչել Վանաձոր համայնքի սեփականության իրավունքը Վանաձոր քաղաքի Ներսիսյան փողոց 1-ին նրբանցք թիվ 18 շենքի բակում ինքնակամ կառուցված, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված օրինականացման պայմաններին համապատասխանող 27.2քմ արտաքին (ներքին՝ 24.94քմ) մակերեսով ավտոտնակի և դրանով զբաղեցված ու սպասարկման համար անհրաժեշտ, ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի թվին չդասվող 27.2քմ մակերեսով հողամասի նկատմամբ՝ համաձայն հատակագծի:
2. Ճանաչել օրինական սույն որոշման 1-ին կետում նշված բնակելի գործառնական նշանակությամբ ինքնակամ կառույցը:
3. Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հավաքագրման, հաշվառման և գովազդի բաժնին՝ 5-օրյա ժամկետում դիմել ՀՀ կադաստրի կոմիտեի Լոռու մարզային ստորաբաժանում՝ սույն որոշման 1-ին կետում նշված ինքնակամ կառուցված ավտոտնակի և դրանով զբաղեցված ու սպասարկման համար անհրաժեշտ

հողամասի նկատմամբ համայնքի սեփականության իրավունքի պետական գրանցում կատարելու համար:

4. Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության բաժնի պետ-գլխավոր ճարտարապետ Ս. Աբովյանին՝ սույն որոշման 1-ին կետում նշված գույքի նկատմամբ համայնքի սեփականության իրավունքի գրանցումից հետո 15 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր առաջարկել սույն որոշման 1-ին կետում նշված շինության ինքնակամ կառուցումը իրականացրած անձին ավտոտնակը և հողամասը ուղղակի վաճառքի ձևով օտարելու վերաբերյալ:

5. Վանաձոր քաղաքի Ներսիսյան փողոց 1-ին նրբանցք, թիվ 18 շենքի բակում գտնվող ավտոտնակին տրամադրել փոստային հասցե՝ Վանաձոր համայնք, Վանաձոր ք., Հ. Ներսիսյան փողոց, 1-ին նրբանցք, 18/12 ավտոտնակ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ  
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2023թ. դեկտեմբերի 25  
ք. Վանաձոր



## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք

Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,  
info@vanadzor.am

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ

25 դեկտեմբերի 2023 թվականի N1989

ՎԱՆԱԶՈՐ ՔԱՂԱՔԻ ՉՈՒԽԱՋՅԱՆ ԹԱՂԱՄԱՍ, ԹԻՎ 7 ՇԵՆՔԻ  
ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՄԵՏԱՂԱԿԱՆ  
ԱՎՏՈՏՆԱԿԻ ԵՎ ԴՐԱՆՈՎ ԶԲԱՂԵՑՎԱԾ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ  
ԱՆՀՐԱԺԵՇՏ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ  
ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՃԱՆԱԶԵԼՈՒ, ԱՎՏՈՏՆԱԿՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ  
ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՅԵ ՏՐԱՄԱԴԻԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Սամվել Գևորգի Նալբանդյանի 26.10.2021թ. թիվ 15041 դիմումը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը 14694, հանրային ծառայություններ մատուցող կազմակերպությունների եզրակացությունները, ԳԱՍՊԱՐ ՎԵՔԻԼՅԱՆ ԱՁ-ի կողմից տրված հողամասի և շինությունների հատակագծերը, շինությունների բնութագիրը, 10.11.2023թ. «Վանաձորի նախագծող» ՍՊԸ-ի կողմից տրված շինությունների տեխնիկական վիճակի վերաբերյալ թիվ ՎՆ1-100/23 ա եզրակացությունը, 26.04.2023թ. Վանաձոր համայնքի ավագանու թիվ 33 որոշումը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 731-Ն որոշմամբ հաստատված կարգով, ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 33-րդ կետով, ՀՀ կառավարության 2021թ. փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով՝ **որոշում եմ**.

1. Ճանաչել Վանաձոր համայնքի սեփականության իրավունքը Վանաձոր քաղաքի Չուխաջյան թաղամաս, թիվ 7 շենքի հյուսիսային մասում ինքնակամ կառուցված, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված օրինականացման պայմաններին համապատասխանող 24.0քմ արտաքին մակերեսով (ներքին մակերեսը՝ 23.01քմ) մետաղական ավտոտնակի և դրանով զբաղեցված ու սպասարկման համար անհրաժեշտ, ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի թվին չդասվող 24.0քմ մակերեսով հողամասի նկատմամբ՝ համաձայն հատակագծի:

2. Ճանաչել օրինական սույն որոշման 1-ին կետում նշված բնակելի գործառնական նշանակությամբ ինքնակամ կառույցը:

3. Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հաշվառման, հավաքագրման և գովազդի բաժնին՝ 5-օրյա ժամկետում դիմել ՀՀ կադաստրի կոմիտեի Լոռու մարզային ստորաբաժանում՝ սույն որոշման 1-ին կետում նշված ինքնակամ կառուցված մետաղական ավտոտնակի և դրանով զբաղեցված ու սպասարկման համար անհրաժեշտ հողամասի նկատմամբ համայնքի սեփականության իրավունքի պետական գրանցում կատարելու համար:

4. Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության բաժնի պետ-գլխավոր ճարտարապետ Ս.Աբովյանին՝ սույն որոշման 1-ին կետում նշված գույքի նկատմամբ համայնքի սեփականության իրավունքի գրանցումից հետո 15 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր առաջարկել սույն որոշման 1-ին կետում նշված շինության ինքնակամ կառուցումը իրականացրած անձին մետաղական ավտոտնակը և հողամասը վարձակալելու վերաբերյալ:

5. Վանաձոր համայնքի, Վանաձոր քաղաքի Չուխաջյան թաղամաս, թիվ 7 շենքի հյուսիսային մասում գտնվող գույքին տրամադրել փոստային հասցե՝ Վանաձոր համայնք, Վանաձոր ք., Տ. Չուխաջյան թաղամաս, 5/23 ավտոտնակ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ  
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2023թ. դեկտեմբերի 25  
ք. Վանաձոր



## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք  
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,  
info@vanadzor.am

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ

25 դեկտեմբերի 2023 թվականի N 1990

«ՀԱՐԻՆԳ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ԴԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ  
ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՄԲ ՏԱՐԱԾՔ ՀԱՆՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Հարինգ» ՍՊԸ-ի տնօրեն Կ. Ծատուրյանի դիմումը, Վանաձոր համայնքի ավագանու 29 նոյեմբերի 2023 թվականի թիվ 75 որոշումը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով՝ համայնքի ղեկավարը որոշում է.

1. Տիգրան Մեծի պողոտայի թիվ 22 հասցեում գտնվող համայնքապետարանի առաջին հարկի 100.1քմ մակերեսով տարածքը, 1/մեկ/ տարի ժամկետով, վարձակալության հանձնել «Հարինգ» ՍՊԸ-ին, որպես աշխատանքային գրասենյակ՝ վարձավճարի չափ սահմանելով 1քմ մակերեսի համար ամսական՝ 1200/հազար երկու հարյուր/ ՀՀ դրամ:

2. Վանաձոր համայնքի ղեկավարին՝ «Հարինգ» ՍՊԸ-ի հետ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կնքել ոչ բնակելի տարածքի վարձակալության պայմանագիր:

ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐ  
ԴԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2023թ. դեկտեմբերի 25  
ք. Վանաձոր



## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք  
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,  
info@vanadzor.am

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ

26 դեկտեմբերի 2023 թվականի N1991

ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔ ՎԱՆԱԶՈՐ ՔԱՂԱՔԻ ՆԱՐԵԿԱՅՈՒ (ՆԱԽԿԻՆ  
ՍՎԵՐԴԼՈՎԻ) ՓՈՂՈՑ ԹԻՎ 11 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ԿԻՑ ՀՈՂԱՄԱՍԻ  
ԵՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԻՄԱԿ ՀՈՎՀԱՆՆԵՍԻ ՇԱՀՐԱԶՅԱՆԻ  
ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱԶԵԼՈՒ, ՀՈՂԱՄԱՍ ՕՏԱՐԵԼՈՒ ԵՎ  
ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴԻԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Սիմակ Հովհաննեսի Շահբազյանի դիմումը, 02.03.1989թ. տրված անհատական բնակելի տան տեխնիկական անձնագիրը, 12.10.2021թ. ըստ օրենքի ժառանգության իրավունքի թիվ 5330 (նոտարական ակտի կոդ: 763-20211012-84-5445694) վկայագիրը, Վանաձոր համայնքի ավագանու 26 ապրիլի 2023 թվականի թիվ 34 որոշումը, ՀՀ «Լոռու մարզ» նոտարական տարածքի նոտար Ռոզա Սեյրանի Բեկյանի կողմից 12.10.2021թ. իրավունք սահմանող փաստաթղթերի պատկանելության իրավաբանական նշանակություն ունեցող փաստը հաստատելու մասին թիվ 5327 (նոտարական ակտի կոդ: 763-20211011-216-5441515) նոտարական ակտը, 07.07.2022թ. «Վանաձորի նախագծող» ՍՊԸ-ի կողմից տրված շինությունների տեխնիկական վիճակի վերաբերյալ թիվ ՎՆ1-62/22 Ի եզրակացությունը, 19.12.2023թ. ՀՀ կադաստրի կոմիտեի կողմից տրամադրված հաշվառման (չափագրման) տվյալների մուտքագրման տեղեկանքը (չափագրման տվյալների մուտքագրման ծածկագիր: 2023XJXZUS) անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը /48610/, ԱՐՏՅՈՒՄ ՍԱՔԱՆՅԱՆ ԱՁ-ի կողմից տրված հողամասի, շինությունների հատակագիծը, շինությունների բնութագիրը, մասնագիտական եզրակացությունը, հանրային ծառայություններ մատուցող կազմակերպությունների եզրակացությունները և հաշվի առնելով այն, որ Վանաձոր համայնք Վանաձոր քաղաքի Նարեկացու (նախկին Սվերդլովի) փողոց թիվ 11 հասցեի բնակելի տան կառուցման և սպասարկման համար անհրաժեշտ օրինական 380.0քմ և դրան կից 300.0քմ ու այն գերազանցող 319.5քմ մակերեսներով հողամասերը, դրանց վրա կառուցված բնակելի նշանակության շինությունները չեն գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի և ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին, չեն առաջացնում սերմիտուտ: Բնակելի տունը կառուցվել է 1956-1991թ.թ-ին, դրա զբաղեցրած և սպասարկման համար անհրաժեշտ հողամասի մակերեսը փաստացի կազմում է 999.5քմ: Ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ և 9-րդ կետերով, 10.06.2008թ. «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով, ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով՝ **որոշում եմ.**

1. Ճանաչել Սիմակ Հովհաննեսի Շահբազյանի սեփականության իրավունքը Վանաձոր համայնք Վանաձոր քաղաքի Նարեկացու (նախկին Սվերդլովի) փողոց թիվ 11 հասցեի բնակելի տան կառուցման և սպասարկման համար անհրաժեշտ օրինական 380.0քմ մակերեսով հողամասին կից 300.0քմ մակերեսով հողամասի նկատմամբ, իսկ սահմանված 300.0քմ հողամասը գերազանցող 319.5քմ մակերեսով չկառուցապատված հողամասը ուղղակի վաճառքի ձևով օտարել Սիմակ Հովհաննեսի Շահբազյանին՝ դրա կադաստրային արժեքով՝ 1419160 (մեկ միլիոն չորս հարյուր տասնինը հազար հարյուր վաթսուն) դրամով:

2. Ճանաչել Սիմակ Հովհաննեսի Շահբազյանի սեփականության իրավունքը Վանաձոր համայնք Վանաձոր քաղաքի Նարեկացու (նախկին Սվերդլովի) փողոց թիվ 11 հասցեի 999.5քմ մակերեսով հողամասի վրա գտնվող բնակելի նշանակության բոլոր շինությունների նկատմամբ:

3. Վանաձոր համայնքի ղեկավարին՝ Սիմակ Հովհաննեսի Շահբազյանի հետ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կնքել 319.5քմ մակերեսով հողամասի առուվաճառքի պայմանագիր, իսկ համայնքի աշխատակազմի եկամուտների հաշվառման, հավաքագրման և գովազդի բաժնին՝ հաշվառել վերոնշյալ պայմանագիրը:

4. Հողամասի սահմանները որոշվում են համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով:

5. Վանաձոր համայնք Վանաձոր քաղաքի Նարեկացու (նախկին Սվերդլովի) փողոց թիվ 11 հասցեում գտնվող գույքին տրամադրել նոր փոստային հասցեն՝ Վանաձոր համայնք Վանաձոր ք., Գ. Նարեկացու փողոց, թիվ 11/3 բնակելի տուն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ  
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2023թ. դեկտեմբերի 26  
ք. Վանաձոր



## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք

Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.iori@mta.gov.am,  
info@vanadzor.am

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ

26 դեկտեմբերի 2023 թվականի N1992

ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ, ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՈՒԿՐՇԻՆ ԱՎԱՆ, ԹԻՎ 15/1  
(ՊԱՅՄԱՆԱԿԱՆ) ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ՈՒ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ  
ԼՈՒՍԱՐԵՐ ՌԱՖԻԿԻ ԱՂՎԱՆՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ  
ՃԱՆԱԶԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Լուսաբեր Ռաֆիկի Աղվանյանի (ծնված՝ 09.10.1963թ.) 30.06.2023թ. թիվ 02/10949 դիմումը, Վանաձոր քաղաքի գլխավոր հատակագծի լրամշակման նախագիծը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը /131287/, հանրային ծառայություններ մատուցող կազմակերպությունների եզրակացությունները, 07.08.2023թ. տրված թիվ 4141 (նոտարական ակտի կոդ: 741-20230807-66-7178692) հայտարարությունը, Փոխադարձ հաշվարկների ստուգման ակտը, 29.11.2023թ. ՀՀ կադաստրի կոմիտե կողմից տրված հաշվառման (չափագրման) տվյալների մուտքագրման տեղեկանքը (չափագրման տվյալների մուտքագրման ծածկագիր՝ 2023ND4BDY), ԱՐՍԵՆ ԻՍԱՀԱԿՅԱՆ ՌՈՒԴԻԿԻ ԱԶ-ի կողմից տրված հողամասի, շինությունների հատակագիծը, շինությունների բնութագիրը և հաշվի առնելով այն, որ Վանաձոր համայնքի, Վանաձոր քաղաքի Ուկրշին ավան, թիվ 15/1 (պայմանական) հասցեում կառուցված բնակելի տունը և դրա զբաղեցրած ու սպասարկման համար անհրաժեշտ 172.05քմ մակերեսով հողամասը չեն գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի և ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին, չեն առաջացնում սերվիտուտ: Բնակելի տունը կառուցվել է 1989թ., դրա կառուցման և սպասարկման համար անհրաժեշտ 172.05քմ մակերեսով հողամասը զբաղեցվել և շահագործվում է սկսած 1990թ.-ից:

Ղեկավարվելով 10.06.2008թ. «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով, ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով՝ **որոշում եմ.**

1. Ճանաչել Լուսաբեր Ռաֆիկի Աղվանյանի սեփականության իրավունքը մինչև 2001թ. մայիսի 15-ը Վանաձոր համայնքի Վանաձոր քաղաքի Ուկրշին ավան, թիվ 15/1 (պայմանական) հասցեում կառուցված իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տան կառուցման և սպասարկման համար անհրաժեշտ 172.05քմ մակերեսով հողամասի և դրա վրա գտնվող բնակելի նշանակության բոլոր շինությունների նկատմամբ:
2. Հողամասի սահմանները որոշվում են համայնքի ղեկավարի կողմից հաստատված

հատակագծով: Հողամասի նպատակային և գործառնական նշանակությունը համապատասխանում է Վանաձոր քաղաքի գլխավոր հատակագծի լրամշակման նախագծին և բավարում է ՀՀ կառավարության 02.04.2015թ.-ի թիվ 412-Ն որոշման 1-ին կետի ը. ենթակետի դրույթներին և ենթակա է գրանցման որպես բնակավայրերի նպատակային նշանակության՝ գործառնական նշանակությունը բնակելի կառուցապատման հողամաս:

3. Սույն որոշման 1-ին կետում նշված գույքին տրամադրել փոստային հասցե՝ Վանաձոր համայնք, Վանաձոր ք., Մարշալ Բաղրամյան պողոտա, 63/9 բնակելի տուն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ  
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2023թ. դեկտեմբերի 26  
ք. Վանաձոր



## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք

Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.ori@mta.gov.am, info@vanadzor.am

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ

26 դեկտեմբերի 2023 թվականի N1993

ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՏԱՐՈՆ-2 ՔՇՀ 3 ԹԱՂԱՄԱՍ  
ԹԻՎ 75/8-1 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏԼՎՈՂ, ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ  
ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՃԱՆԱԶՎԱԾ ԱՎՏՈՏՆԱԿԸ ԵՎ ԴՐԱՆՈՎ ԶԲԱՂԵՑՎԱԾ  
ՀՈՂԱՄԱՍԸ ՍԱՄՎԵԼ ՍԵՐՅՈԺԱՅԻ ՀՈՎԱՍԱՓՅԱՆԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ,  
ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐԻ 21 ԴԵԿՏԵԲԵՐԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ  
2559 ԵՎ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐԻ 23 ՄԱՐՏԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ  
ԹԻՎ 745 ՈՐՈՇՈՒՄՆԵՐՆ ՌԻԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Սամվել Սերյոժայի Հովասափյանի՝ 24.02.2020թ. 067/1124 և 26.05.2022 թ. 02/4604 դիմումները, Վանաձոր համայնքի անվամբ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 20022020-06-0021 վկայականը, 26.04.2023թ. Վանաձոր համայնքի ավագանու թիվ 33 որոշումը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 34.2-րդ կետով և 35-րդ կետի դ) և ե) ենթակետերով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածով՝ **որոշում եմ.**

1. Վանաձոր համայնքի Վանաձոր քաղաքի Տարոն-2 ՔՇՀ 3 թաղամաս թիվ 75/8-1 հասցեում գտնվող, Վանաձոր համայնքի սեփականությունը ճանաչված 21.0քմ մակերեսով ավտոտնակը 35700 (երեսունհինգ հազար յոթ հարյուր) դրամով և դրանով զբաղեցված ու սպասարկման համար անհրաժեշտ 28.0քմ մակերեսով հողամասը 53600 (հիսուներեք հազար վեց հարյուր) դրամով, ուղղակի վաճառքի ձևով օտարել Սամվել Սերյոժայի Հովասափյանին:

2. Վանաձորի համայնքի ղեկավարին՝ Սամվել Հովասափյանի հետ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կնքել ավտոտնակի և հողամասի առուվաճառքի պայմանագիր, իսկ աշխատակազմի եկամուտների հավաքագրման, հաշվառման և գովազդի բաժնին հաշվառել վերոնշյալ պայմանագիրը:

3. Ուժը կորցրած ճանաչել Վանաձոր համայնքի ղեկավարի 23 մարտի 2020 թվականի «Վանաձոր քաղաքի Տարոն-2, ՔՇՀ 3 թաղամաս թիվ 75/8-1 հասցեում գտնվող, Վանաձոր համայնքի սեփականությունը ճանաչված ավտոտնակը և դրանով զբաղեցված հողամասը Սամվել Սերյոժայի Հովասափյանին օտարելու մասին» թիվ 745 որոշումը:

4. Ուժը կորցրած ճանաչել Վանաձոր համայնքի ղեկավարի 21 դեկտեմբերի 2021 թվականի «Վանաձոր քաղաքի Տարոն-2, ՔՇՀ 3 թաղամաս թիվ 75/8-1 հասցեում գտնվող, Վանաձոր համայնքի սեփականությունը ճանաչված ավտոտնակը և դրանով զբաղեցված հողամասը Սամվել Սերյոժայի Հովասափյանին օտարելու, Վանաձոր համայնքի ղեկավարի 23 մարտի 2020 թվականի թիվ 745 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 2559 որոշումը:

ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐԻ  
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ

Ա. ՓԵԼԵՇՅԱՆ



## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք  
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 [vanadzor.lori@mta.gov.am](mailto:vanadzor.lori@mta.gov.am),  
[info@vanadzor.am](mailto:info@vanadzor.am)

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ

26 դեկտեմբերի 2023 թվականի N1994

ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔ, ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՏԻԳՐԱՆ ՄԵԾԻ ՊՈՂՈՏԱ 12/2  
ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ  
ՃԱՆԱԶՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԸ ԵՎ ԱՐՇԱԿ ԼԵՎՈՆԻ ՄԱՆՈՒԿՅԱՆԻՆ  
ՆԱԽԱՊԱՏՎՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Արշակ Լևոնի Մանուկյանի 11.12.2023 թվականի թիվ 02/22055 դիմումը, Վանաձոր համայնքի անվամբ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 09062022-06-0040 և Արշակ Լևոնի Մանուկյանի անվամբ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 29032023-06-0022 վկայականները, 29.11.2023 թվականի Վանաձոր համայնքի ավագանու թիվ 47 որոշումը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ, 4-րդ կետերով և 2-րդ մասով՝ **որոշում եմ.**

1. Վանաձոր քաղաքի Տիգրան Մեծի պողոտա 12 /2 հասցեում գտնվող, ՀՀ Լոռու մարզի Վանաձոր քաղաքի գլխավոր հատակագծի լրամշակված նախագծի համաձայն ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի թվին չդասվող 16.45 քմ մակերեսով հողամասը հողի կադաստրային արժեքով՝ 266106 /երկու հարյուր վաճառվեց հազար հարյուր վեց/ ՀՀ դրամով, նախապատվության իրավունքով ուղղակի վաճառքի ձևով օտարել Արշակ Լևոնի Մանուկյանին:

2. Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հավաքագրման, հաշվառման և գովազդի բաժնին՝ Արշակ Լևոնի Մանուկյանին հետ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կնքել 16.45 քմ մակերեսով հողամասի առուվաճառքի պայմանագիր:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ  
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2023թ. դեկտեմբերի 26  
ք. Վանաձոր



## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք  
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,  
info@vanadzor.am

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ

26 դեկտեմբերի 2023 թվականի N 1995

ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔ ՎԱՆԱԶՈՐ ՔԱՂԱՔԻ ՏԻԳՐԱՆ ՄԵԾԻ ՊՈՂՈՏԱ 12/3  
ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ  
ՃԱՆԱԶՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԸ ՀՈՂԱՄԱՍԻ ԸՆԴՀԱՅՆՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԱՐՇԱԿ  
ԼԵՎՈՆԻ ՄԱՆՈՒԿՅԱՆԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Արշակ Լևոնի Մանուկյանի 11.12.2023 թվականի թիվ 02/22053 դիմումը, Վանաձոր համայնքի անվամբ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 15062022-06-0079 և Արշակ Լևոնի Մանուկյանի անվամբ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 29032023-06-0072 վկայականները, 29.11.2023 թվականի Վանաձոր համայնքի ավագանու թիվ 47 որոշումամբ, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ, 4-րդ կետերով և 2-րդ մասով, 12.04.2022թ. «ՀՀ հողային օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» ընդունած ՀՕ 93-Ն ՀՀ օրենքով՝ **որոշում եմ**.

1. Վանաձոր համայնք, Վանաձոր քաղաքի Տիգրան Մեծի պողոտա 12 /3 հասցեում գտնվող, ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի թվին չդասվող 16.45 քմ մակերեսով հողամասը, համաձայն Վանաձոր համայնքի անվամբ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 15062022-06-0079 վկայականի, հողի կադաստրային արժեքով՝ 266106 (երկու հարյուր վաճառվեց հազար հարյուր վեց) ՀՀ դրամով, ուղղակի վաճառքի ձևով օտարել Արշակ Լևոնի Մանուկյանին:

2. Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հավաքագրման, հաշվառման և գովազդի բաժնին՝ Արշակ Լևոնի Մանուկյանի հետ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կնքել 16.45քմ մակերեսով հողամասի առուվաճառքի պայմանագիր:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ  
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



Ա. ՓԵԼԵՇՅԱՆ



## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք  
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,  
info@vanadzor.am

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ

26 դեկտեմբերի 2023 թվականի N1996

ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 06 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ  
1555 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Վանաձոր համայնքի ղեկավարի 06 նոյեմբերի 2023 թվականի թիվ 1555 որոշումը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝ **որոշում եմ.**

Վանաձոր համայնքի ղեկավարի 23 նոյեմբերի 2023 թվականի «Վանաձոր քաղաքի Զոր. Անդրանիկի (նախկին՝ Երևանյան խճուղի) փողոց նրբանցք թիվ 1 հասցեի բնակելի տանը կից հողամասի և դրա վրա գտնվող շինությունների նկատմամբ Վարդան Սարգսի Փանոյանի և Անիկ Սարգսի Ղանթարջյանի ընդհանուր բաժնային սեփականության իրավունքը ճանաչելու և նոր փոստային հասցե տրամադրելու մասին» թիվ 1555 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1. Որոշման նախաբանում, 1-ին և 2-րդ կետերում «Փանոյան» բառը փոխարինել «Փանոսյան» բառով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ  
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2023թ. դեկտեմբերի 26  
ք. Վանաձոր



## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք  
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,  
info@vanadzor.am

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ

26 դեկտեմբերի 2023 թվականի N 1997

ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԱՐՊԱՍ ԳՅՈՒՂԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ  
ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ  
ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՄԲ, 06-033-0233-0008 ԾԱԾԿԱԳՐՈՎ ՎԱՐԵԼԱՀՈՂԸ ՈՐՊԵՍ  
ԵՐԵՔ ԱՌԱՆՁԻՆ ԳՈՒՅՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐՆԵՐ ՏԱՐԱՆՋԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Վանաձոր համայնքի Դարպաս գյուղի անվամբ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 18092015-06-0014 վկայականը, «Գուգարաց Աշխարհ» ՍՊԸ -ի կողմից տրված հողամասի հատակագծերը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, **որոշում եմ**.

1. Տարանջատել Վանաձոր համայնքի Դարպաս գյուղին սեփականության իրավունքով պատկանող գյուղատնտեսական նպատակային նշանակության 06-033-0233-0008 ծածկագրով վարելահողը՝ համաձայն «Գուգարաց Աշխարհ» ՍՊԸ-ի կողմից տրված թիվ 1, 2 և 3 հատակագծերի.

ա) 6.95998 հա մակերեսով հողամաս (հատակագիծ թիվ 3):

բ) 1.00000 հա մակերեսով հողամաս (հատակագիծ թիվ 2):

գ) 3.58869 հա մակերեսով հողամաս (հատակագիծ թիվ 1):

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ  
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2023թ. դեկտեմբերի 26  
ք. Վանաձոր



## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք  
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,  
info@vanadzor.am

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ

26 դեկտեմբերի 2023 թվականի N1998

ՎԱՆԱԶՈՐԻ ՔԱՂԱՔԱԴՐԵՏԻ 01 ՄԱՐՏԻ 2005 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 341  
ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով 10.08.2020 թվականի թիվ ԲԱ 279482 մահվան վկայականը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածով՝ **որոշում եմ.**

1. Ուժը կորցրած ճանաչել Վանաձորի քաղաքապետի 01 մարտի 2005 թվականի «Գևորգ Հակոբջանյանին հողամաս տրամադրելու մասին» թիվ 341 որոշումը՝ լուծելով 2005 թվականի մարտի 16 համայնքային սեփականության հանդիսացող հողատարածքի վարձակալության թիվ 318 պայմանագիրը:

2. Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հաշվառման, հավաքագրման և գովազդի բաժնին՝ կատարել Վանաձոր քաղաքի Վարդանանց փողոց, թիվ 36/36դ հասցեում գտնվող հողամասի վճարների վերահաշվարկ և վերջնահաշվարկ:

3. Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարության, անձնակազմի կառավարման բաժնին՝ սույն որոշման մեկ օրինակը ուղարկել ՀՀ կադաստրի կոմիտեի Լոռու մարզային ստորաբաժանում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ  
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2023թ. դեկտեմբերի 26  
ք. Վանաձոր



## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք  
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,  
info@vanadzor.am

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ

26 դեկտեմբերի 2023 թվականի N1999

ՎԱՆԱՁՈՐԻ ՔԱՂԱՔԱԴԵՏԻ 26 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2005 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 772  
ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով 06.05.2019 թվականի թիվ ԲԱ 113429 մահվան վկայականը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածով՝ **որոշում եմ**.

1. Ուժը կորցրած ճանաչել Վանաձորի քաղաքապետի 26 սեպտեմբերի 2003 թվականի «Խորեն Փնջոյանին հողամաս տրամադրելու մասին» թիվ 772 որոշումը՝ լուծելով 2003 թվականի հոկտեմբերի 11-ին համայնքային սեփականության հանդիսացող հողամասի վարձակալության իրավունքի տրամադրման թիվ 571 պայմանագիրը:

2. Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հաշվառման, հավաքագրման և գովազդի բաժնին՝ կատարել Վանաձոր քաղաքի Թատերական փողոց, թիվ 2դ հասցեում գտնվող հողամասի վճարների վերահաշվարկ և վերջնահաշվարկ:

3. Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարության անձնակազմի կառավարման բաժնին՝ սույն որոշման մեկ օրինակը ուղարկել ՀՀ կադաստրի կոմիտեի Լոռու մարզային ստորաբաժանում:

ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐԻ  
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2023թ. դեկտեմբերի 26  
ք. Վանաձոր



## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք  
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.ori@mta.gov.am,  
info@vanadzor.am

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ

26 դեկտեմբերի 2023 թվականի N 2000

ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՍՈՎԵՏԱԿԱՆ ԲԱՆԱԿԻ ՓՈՂՈՑ 8 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ  
ՏԱՆԸ ԿԻՑ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԱՆԱՀԻՏ  
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՌԱՔԵԼՅԱՆԻ ԵՎ ՀՈՎԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՌԱՔԵԼՅԱՆԻ  
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱԺՆԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՁԵԼՈՒ  
ԵՎ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հովիկ Հմայակի Առաքելյանի (ծնված՝ 06.11.1955թ.) և Անահիտ Հմայակի Առաքելյանի (ծնված՝ 08.03.1959թ.) 15.06.2023 թվականի թիվ 02/9726 դիմումը, 06.11.2023թ. «Վանաձորի նախագծող» ՍՊԸ-ի կողմից տրված շինությունների տեխնիկական վիճակի վերաբերյալ թիվ ՎՆ1-394/23 Ի եզրակացությունը, հանրային ծառայություններ մատուցող կազմակերպությունների եզրակացությունները, 07.04.2023 թվականի ըստ օրենքի ժառանգության իրավունքի թիվ 2058 վկայագիրը նոտարական ակտի կոդ: 763-20230407-84-6821792, 6.09.1989 թվականին տրված տեխնիկական անձնագիրը, 16.11.2023թ. ՀՀ կադաստրի կոմիտե տրված հաշվառման (չափագրման) տվյալների մուտքագրման տեղեկանքը (չափագրման տվյալների մուտքագրման ծածկագիր: 20232NNVAD), «Տարոն Վարդանյան Արտուրի» ԱԶ-ի կողմից տրված հողամասի և շինությունների հատակագծերը, շինությունների բնութագիրը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը և հաշվի առնելով այն, որ Վանաձոր քաղաքի Սովետական Բանակի փողոց 8 հասցեի բնակելի տան կառուցման և սպասարկման համար անհրաժեշտ օրինական 328.20քմ և դրան կից 221.7քմ մակերեսներով հողամասերը, դրանց վրա կառուցված բնակելի նշանակության շինությունները չեն գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի և ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին, չեն առաջացնում սերվիտուտ: Անհատական բնակելի տունը կառուցվել է 1950-1990 թթ-ին, բնակելի տան զբաղեցրած և սպասարկման համար անհրաժեշտ հողամասի մակերեսը փաստացի կազմում է 0.05499 հա:

Ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 189-րդ և 190-րդ հոդվածներով, 10.06.2008թ. «Իրավունք հաստատող փաստաթղթերը չափապանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով, ՀՀ կառավարության 2021թ. փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով՝ **որոշում եմ.**

1. Ճանաչել Հովիկ Հմայակի Առաքելյանի և Անահիտ Հմայակի Առաքելյանի ընդհանուր բաժնային սեփականության իրավունքները Վանաձոր քաղաքի Սովետական Բանակի փողոց

8 հասցեի բնակելի տան կառուցման և սպասարկման համար անհրաժեշտ օրինական 0.03282 հա մակերեսով և դրան կից 0.02217 հա մակերեսով հողամասերի նկատմամբ:

2. Ճանաչել Հովիկ Հմայակի Առաքելյանի և Անահիտ Հմայակի Առաքելյանի ընդհանուր բաժնային սեփականության իրավունքը Վանաձոր քաղաքի Սովետական Բանակի փողոց 8 հասցեի բնակելի տան կառուցման և սպասարկման համար անհրաժեշտ օրինական 0.05499 հա մակերեսով մակերեսով հողամասի վրա գտնվող բնակելի նշանակության շինությունների նկատմամբ:

3. Հողամասի սահմանները որոշվում են համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով:

4. Վանաձոր քաղաքի Սովետական Բանակի փողոց 8 հասցեում գտնվող բնակելի տանը տրամադրել նոր փոստային հասցե՝ Վանաձոր համայնք, Վանաձոր ք., Բանակի փողոց, 8/7 բնակելի տուն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ  
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2023թ. դեկտեմբերի 26  
ք. Վանաձոր



## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք  
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 [vanadzor.lori@mta.gov.am](mailto:vanadzor.lori@mta.gov.am),  
[info@vanadzor.am](mailto:info@vanadzor.am)

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ

26 դեկտեմբերի 2023 թվականի N 2001

ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ԱՐՈՎՅԱՆ ՓՈՂՈՑ 40 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՎԱՀՐԱՄ  
ՌՈՔԵՐՏԻ ԿԻՐԱԿՈՍՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ  
ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՃՇՏՎԱԾ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ,  
ՀՈՂԱՄԱՍԸ ՈՐՊԵՍ ԵՐԿՈՒ ԱՌԱՆՁԻՆ ԳՈՒՅՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐՆԵՐ  
ՏԱՐԱՆՋԱՏԵԼՈՒ, ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՎԱՆԱՁՈՐ  
ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐԻ 14 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 783  
ՈՐՈՇՈՒՄՆ ՌԻԺ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Վահրամ Ռոբերտի Կիրակոսյանի լիազորված անձ Հասմիկ Սամվելի Աղվանյանի 11.05.2023 թվականի թիվ 02/7640 դիմումը, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 01102021-06-0040 վկայականը, «ԳՈՒԳԱՐԱՅ ԱՇԽԱՐՀ» ՍՊԸ-ի կողմից տրված հողամասի հատակագիծը, մասնագիտական եզրակացությունը, 27.06.2022 թվականի թիվ 50 ԱԲ 6952727 լիազորագրի ռուսերենից հայերեն թիվ 5461 թարգմանությունը (նոտարական ակտի կոդ: 763-20220907-64-6244590) ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 59-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ կառավարության 29.04.2021թ. թիվ 698-Ն որոշումով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածով, ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 2-րդ ենթակետով՝ **որոշում եմ.**

1. Հաստատել Վանաձոր քաղաքի Աբովյան փողոց 40 հասցեում գտնվող բնակելի տան զբաղեցրած 0.043245 հա մակերեսով հողամասի ճշտված սահմանները՝ համաձայն համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծի:

2. Տարանջատել Վանաձոր քաղաքի Աբովյան փողոց 40 հասցեում Վահրամ Ռոբերտի Կիրակոսյանին սեփականության իրավունքով պատկանող 0.043245 հա մակերեսով հողամասը՝ համաձայն «ԳՈՒԳԱՐԱՅ ԱՇԽԱՐՀ» ՍՊԸ-ի կողմից տրված թիվ 1 և թիվ 2 հատակագծերի:

3. Վանաձոր քաղաքի Աբովյան փողոց 40 հասցեում գտնվող տարանջատված գույքին տրամադրել փոստային հասցեներ.

ա) 0.04054 հա մակերեսով հողամասի և 192.4քմ ընդհանուր մակերեսով շինությունների փոստային հասցեն՝ Վանաձոր համայնք Վանաձոր ք., Ս. Աբովյան փողոց, թիվ 40/1 բնակելի տուն (հատակագիծ թիվ 1)

բ) 0.00271 հա մակերեսով հողամասի՝ որից 0.00267 հա մակերեսով հողամասը հանդիսանում է ընդհանուր օգտագործման ճանապարհ երկու տնատիրությունների միջև, փոստային հասցեն՝

Վանաձոր համայնք Վանաձոր ք., Ս. Աբովյան փողոց, թիվ 40/2 հողամաս (հատակագիծ թիվ 2):

4. Ուժը կորցրած ճանաչել Վանաձոր համայնքի ղեկավարի 14 նոյեմբերի 2022 թվականի «Վանաձոր քաղաքի Աբովյան փողոց 40 հասցեում գտնվող բնակելի տան զբաղեցրած հողամասի ճշտված սահմանները հաստատելու մասին» թիվ 783 որոշումը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ  
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2023թ. դեկտեմբերի 26  
ք.Վանաձոր



## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք  
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.ori@mta.gov.am,  
info@vanadzor.am

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ

26 դեկտեմբերի 2023 թվականի N 2002

ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 01 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ  
1523 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Կարապետ Սամվելի Ղազարյանի լիազորված անձ՝ Արամ Յուրայի Առաքելյանի դիմումը, 28.09.2023 թվականի թիվ 8059 լիազորագիրը, /նոտարական ակտի կոդ: 763-20230928-79-7335032/, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 29092023-06-0041 վկայականը, Վանաձոր համայնքի ղեկավարի 01.11.2023թ. թիվ 1523 որոշումը, ՀՀ կադաստրի կոմիտեի գույքի նկատմամբ իրավունքի (սահմանափակման) պետական գրանցման վարույթը կասեցնելու մասին 04.12.2023թ. թիվ Կ-04122023-06-0151 որոշումը, ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝ **որոշում եմ.**

Վանաձոր համայնքի ղեկավարի 01 նոյեմբերի 2023 թվականի «Վանաձոր համայնք Վանաձոր քաղաքի Տիգրան Մեծի պողոտա 67 շենքի 20 հասցեում գտնվող բնակարանի օգտագործման նպատակը փոխելու և նոր փոստային հասցե տրամադրելու մասին» թիվ 1523 որոշման մեջ կատարել հետևյալ լրացումները.

- 1.Որոշման վերնագիրը «20 հասցեում գտնվող բնակարանի» բառերից հետո լրացնել «նպատակային նշանակությունը և» բառերով:
- 2.Որոշման 1-ին կետը «20 հասցեում գտնվող բնակարանի» բառերից հետո լրացնել «նպատակային նշանակությունը փոխել՝ բնակելիից՝ որպես հասարակական և» բառերով:
- 3.Որոշումը լրացնել նոր հետևալ բովանդակությամբ 3-րդ և 4-րդ կետերով.
3. Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի համատիրությունների աշխատանքների համակարգման բաժնին՝ սույն որոշման 1-ին կետում նշված գույքը հանել բնակարանային ֆոնդից:
4. Բնակարանի գործառնական նշանակության փոփոխության համար շինարարության թույլտվություն չի պահանջվում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ  
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2023թ. դեկտեմբերի 26  
Ք. Վանաձոր



## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք  
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,  
info@vanadzor.am

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ

26 դեկտեմբերի 2023 թվականի N 2003

ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔ, ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ Կ. ԴԵՄԻՐՃՅԱՆ ՓՈՂՈՑ 16/16  
ՀԱՅՅԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ  
ՃԱՆԱԶՎԱԾ ԱՎՏՈՏՆԱԿԸ ԵՎ ԴՐԱՆՈՎ ԶԲԱՂԵՅՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԸ ԱՐԹՈՒՐ  
ԿԱՄՈՅԻ ԱՔՈՒԼՅԱՆԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Արթուր Կամոյի Աքուլյանի 21.10.2022թ. թիվ 13622 դիմումը, Վանաձոր համայնքի անվամբ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 06122023-06-0029 վկայականը, 26.04.2023թ. Վանաձոր համայնքի ավագանու թիվ 33 որոշումը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 34.2-րդ կետով և 35-րդ կետի դ) և ե) ենթակետերով՝ **որոշում եմ.**

1. Վանաձոր համայնք, Վանաձոր քաղաքի Կ. Դեմիրճյան փողոց 16/16 հասցեում գտնվող, Վանաձոր համայնքի սեփականությունը ճանաչված 44.0քմ ավտոտնակը 141070 (հարյուր քառասունմեկ հազար յոթանասուն) դրամով և դրանով զբաղեցված ու սպասարկման համար անհրաժեշտ, ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի թվին չդասվող 44.0քմ մակերեսով հողամասը 711780 (յոթ հարյուր տասնմեկ հազար յոթ հարյուր ութսուն) դրամով, ուղղակի վաճառքի ձևով օտարել Արթուր Կամոյի Աքուլյանին:

2. Վանաձոր համայնքի ղեկավարին՝ Արթուր Կամոյի Աքուլյանի հետ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կնքել ավտոտնակի և հողամասի առուվաճառքի պայմանագիր, իսկ աշխատակազմի եկամուտների հաշվառման, հավաքագրման և գովազդի բաժնին հաշվառել վերոնշյալ պայմանագիրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ  
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2023թ. դեկտեմբերի 26  
ք. Վանաձոր



## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք  
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 [vanadzor.ori@mta.gov.am](mailto:vanadzor.ori@mta.gov.am),  
[info@vanadzor.am](mailto:info@vanadzor.am)

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ

26 դեկտեմբերի 2023 թվականի N 2004

ՎԱՆԱԶՈՐ ՔԱՂԱՔԻ ԱԲՈՎՅԱՆ ՓՈՂՈՑ ԹԻՎ 8 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ,  
ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԱՐԳԻՍ ԱՇՈՏԻ  
ՄԱՆՈՒԿՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱԺՆԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ  
ՃԱՆԱԶԵԼՈՒ ԵՎ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Սարգիս Աշոտի Մանուկյանի (ծնված՝ 05.03.1979թ.) դիմումը, 20.12.1996թ. տրված սեփականության վկայագիրը, 04.02.2009թ. տրված ըստ կտակի ժառանգության իրավունքի թիվ 393 վկայագիրը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը, ԱՐՏՅՈՄ ՍԱՔԱՆՅԱՆ ՌՈՒԴԻԿԻ ԱԶ-ի կողմից տրված հողամասի և շինությունների հատակագիծը, շինությունների բնութագիրը և հաշվի առնելով այն, որ Վանաձոր քաղաքի Աբովյան փողոց թիվ 8 հասցեի բնակելի տան կառուցման և սպասարկման համար անհրաժեշտ օրինական 749.7քմ մակերեսով հողամասը և դրա վրա կառուցված բնակելի նշանակության շինությունները չեն գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի և ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին, չեն առաջացնում սերվիտուտ: Անհատական բնակելի տունը կառուցվել է 1949-1983թթ., բնակելի տան զբաղեցրած և սպասարկման համար անհրաժեշտ հողամասի մակերեսը փաստացի կազմում է 749,7քմ, որը ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով պատկանում է Սարգիս Աշոտի Մանուկյանի և կից տնատիրությանը հավասար բաժիններով: Սարգիս Աշոտի Մանուկյանի բաժնեմասը կազմում է 374.85քմ (749.7 : 2):

Ղեկավարվելով Քաղաքացիական օրենսգրքի 189-րդ և 190-րդ հոդվածներով, 10.06.2008թ. «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով, ՀՀ կառավարության 2021թ. փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով՝ **որոշում եմ.**

1. Ճանաչել Սարգիս Աշոտի Մանուկյանի ընդհանուր բաժնային սեփականության իրավունքը Վանաձոր քաղաքի Աբովյան փողոց թիվ 8 հասցեի բնակելի տան կառուցման և սպասարկման համար անհրաժեշտ օրինական 374.85քմ (749.7 : 2)քմ մակերեսով հողամասի և դրա վրա գտնվող բնակելի նշանակության բոլոր շինությունների նկատմամբ:

Բնակելի տան զբաղեցրած և սպասարկման համար անհրաժեշտ հողամասի մակերեսը փաստացի կազմում է 749,7քմ, որը ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով

պատկանում է Սարգիս Աշոտի Մանուկյանին և կից տնատիրությանը հավասար բաժիններով:  
Սարգիս Աշոտի Մանուկյանի բաժնեմասը կազում է 374.85քմ (749.7 : 2):

2. Հողամասի սահմանները որոշվում են համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով:

3. Վանաձոր քաղաքի Աբովյան փողոց թիվ 8 հասցեի բնակելի տանը տրամադրել նոր փոստային հասցե՝ Վանաձոր համայնք, Վանաձոր ք., Ս. Աբովյան փողոց, 8 բնակելի տուն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ  
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2023թ. դեկտեմբերի 26  
ք. Վանաձոր



## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք  
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.ori@mta.gov.am,  
info@vanadzor.am

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ

26 դեկտեմբերի 2023 թվականի N 2005

ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 04 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ  
1697 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հրաչիկ Վարդանի Բաղայանի դիմումը, 14.12.2023 թ. ՀՀ կադաստրի կոմիտեի գույքի նկատմամբ իրավունքի (սահմանափակման) պետական գրանցման վարույթը կասեցնելու մասին Կ-14122023-06-0225 որոշումը, Վանաձոր համայնքի ղեկավարի 04 դեկտեմբերի 2023 թվականի թիվ 1697 որոշումը, ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝ **որոշում եմ.**

Վանաձոր համայնքի ղեկավարի 04 դեկտեմբերի 2023 թվականի «Վանաձոր քաղաքի Մաշտոցի փող. թիվ 30 հասցեում գտնվող, Հրաչիկ Վարդանի Բաղայանին սեփականության իրավունքով պատկանող հողամասում ինքնակամ կառուցված բնակելի նշանակության շինություններն օրինականացնելու և հողամասի ճշտված սահմանները հաստատելու մասին» թիվ 1697 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1. Որոշման 3-րդ կետը շարադրել հետևյալ նոր խմբագրությամբ՝ «Հրաչիկ Վարդանի Բաղայանի կողմից օրինականացման համար սահմանված վճարը՝ 84.80քմ ընդհանուր մակերեսով բնակելի նշանակության շինությունների համար՝ 196400 (հարյուր ինսունվեց հազար չորս հարյուր) դրամ գումարը 60-օրյա ժամկետում չվճարելու դեպքում սույն որոշումը կհամարվի ուժը կորցրած»:
2. Հրաչիկ Վարդանի Բաղայանին՝ ինքնակամ շինությունների օրինականացման համար սահմանված վճարի տարբերությունը՝ (196400-166980) 29420 (քսանինը հազար չորս հարյուր քսան) դրամ գումարը վճարել 900235401057 հաշվեհամարին»:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ  
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



ՓԵԼԵՇՅԱՆ



## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք  
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.iori@mta.gov.am,  
info@vanadzor.am

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ

26 դեկտեմբերի 2023 թվականի N 2006

ՎԱՆԱԶՈՐ ՔԱՂԱՔԻ ԲՈՒԼՂԱՐԱԿԱՆ 2-ՐԴ ԱՎԱՆ, ԹԻՎ 16 (ՊԱՅՄԱՆԱԿԱՆ)  
ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ՈՒ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԵՐՄԻՆԵ ՍԵՅՐԱՆԻ  
ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱԶԵԼՈՒ ԵՎ  
ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հերմինե Սեյրանի Նավասարդյանի (ծնված՝ 27.11.1978թ.) լիազորված անձ Ջինա Վելգեմի Հովհաննիսյանի դիմումը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը, 16.10.2023թ. թիվ 5771 լիազորագիրը (նոտարական ակտի կոդ: 594-20231016-90-7383334), հանրային ծառայություններ մատուցող կազմակերպությունների եզրակացությունները, 18.10.2023թ. տրված թիվ 5848 (նոտարական ակտի կոդ: 594-20231018-66-7392254), թիվ 5849 (նոտարական ակտի կոդ: 594-20231018-66-7392243) և թիվ 5850 (նոտարական ակտի կոդ: 594-20231018-66-7392227) հայտարարությունները, Փոխադարձ հաշվարկների ստուգման ակտը, «Վանաձորի նախագծող» ՍՊԸ-ի կողմից տրված շինությունների տեխնիկական վիճակի վերաբերյալ թիվ ՎՆ1-471/23 Ի եզրակացությունը, ՀՀ կադաստրի կոմիտե 21.11.2023թ. տրված հաշվառման (չափագրման) տվյալների մուտքագրման տեղեկանքը (չափագրման տվյալների մուտքագրման ծածկագիր՝ 2023YBT2EH), ԱՐՍԵՆ ԻՍԱՀԱԿՅԱՆ ՌՈՒԴԻԿԻ ԱԶ-ի կողմից տրված տեղագրական հատակագիծը և հաշվի առնելով այն, որ Վանաձոր քաղաքի Բուլղարական 2-րդ ավան, թիվ 16 (պայմանական) հասցեում կառուցված բնակելի տունը և դրա զբաղեցրած ու սպասարկման համար անհրաժեշտ 168.33քմ մակերեսով հողամասը չեն գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի և ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին, չեն առաջացնում սերվիտուտ: Բնակելի տունը կառուցվել է 1994-2004թթ., դրա կառուցման և սպասարկման համար անհրաժեշտ 168.33քմ մակերեսով հողամասը զբաղեցվել և շահագործվում է սկսած 1994թ.-ից:

Ղեկավարվելով 10.06.2008թ. «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով, ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով՝ **որոշում եմ.**

1. Ճանաչել Հերմինե Սեյրանի Նավասարդյանի սեփականության իրավունքը մինչև 2001թ. մայիսի 15-ը Վանաձոր քաղաքի Բուլղարական 2-րդ ավան, թիվ 16 (պայմանական) հասցեում կառուցված իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տան կառուցման և սպասարկման համար անհրաժեշտ 168.33քմ մակերեսով

հողամասի և դրա վրա գտնվող բնակելի նշանակության բոլոր շինությունների նկատմամբ.  
բացառությամբ՝ 15.05.2001թ.-ից հետո կառուցված 9.62քմ մակերեսով բնակելի տնից և 16.32քմ  
մակերեսով բնակելի տնից:

2. Հողամասի սահմանները որոշվում են համայնքի ղեկավարի կողմից հաստատված  
հատակագծով:

3. Սույն որոշման 1-ին կետում նշված գույքին տրամադրել փոստային հասցե՝ Վանաձոր  
համայնք, Վանաձոր ք., Բուլղարական ավան 2-րդ թաղամաս, 16 բնակելի տուն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ  
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2023թ. դեկտեմբերի 26  
ք.Վանաձոր



## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք

Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,  
info@vanadzor.am

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ

26 դեկտեմբերի 2023 թվականի N 2007

ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔ ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՏԱՐՈՆ-4 ԲԵԼԱՌՈՒՍԱԿԱՆ  
ԹԱՂԱՄԱՍ 12/14 ՀԱՍՅԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ  
ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՃԱՆԱԶՎԱԾ ԱՎՏՈՏՆԱԿԸ ԵՎ ԴՐԱՆՈՎ ԶԲԱՂԵՑՎԱԾ  
ՀՈՂԱՄԱՍԸ ՍԵՐՅՈԺԱ ՎՈԼՈՂՅԱՅԻ ԹՈՒՆՅԱՆԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Սերյոժա Վոլոդյայի Թունյանի լիազորված անձ՝ Նարինե Գեորգիի Կլեկյանի 01.03.2021թ. թիվ 02/3027 դիմումը, 09.02.2021թ. թիվ 505 (նոտարական ակտի կոդ: 594-20210209-90-4921741) լիազորագիրը, Վանաձոր համայնքի անվամբ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 21122023-06-0063 վկայականը, 26.04.2023թ. Վանաձոր համայնքի ավագանու թիվ 34 որոշումը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 34.2-րդ կետով և 35-րդ կետի դ) և ե) ենթակետերով, Վանաձոր համայնքի ավագանու՝ **որոշում եմ.**

1. Վանաձոր համայնքի, Վանաձոր քաղաքի Տարոն-4 Բելառուսական թաղամաս 12/14 հասցեում գտնվող, Վանաձոր համայնքի սեփականությունը ճանաչված 44.5քմ արտաքին մակերեսով (ներքին մակերեսը՝ 38.17քմ) ավտոտնակը 87630 (ութսունյոթ հազար վեց հարյուր երեսուն) դրամով և դրանով զբաղեցված ու սպասարկման համար անհրաժեշտ, ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի թվին չդասվող 44.5քմ մակերեսով հողամասը 197670 ( հարյուր իննսունյոթ հազար վեց հարյուր յոթանասուն) դրամով, ուղղակի վաճառքի ձևով օտարել Սերյոժա Վոլոդյայի Թունյանին:

2. Վանաձոր համայնքի ղեկավարին՝ Սերյոժա Վոլոդյայի Թունյանի հետ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կնքել ավտոտնակի և հողամասի առուվաճառքի պայմանագիր, իսկ աշխատակազմի եկամուտների հաշվառման, հավաքագրման և գովազդի բաժնին հաշվառել վերոնշյալ պայմանագիրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ  
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝

ԱՐԿԱԴԻ ՓԵԼԵՇՅԱՆ





## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք

Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ

26 դեկտեմբերի 2023 թվականի N 2008

ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔ, ՎԱՆԱԶՈՐ ՔԱՂԱՔԻ ԶՈՐՅԱՆ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 79  
ՇԵՆՔԻ ԹԻՎ 100 ԲՆԱԿԱՐԱՆԻՆ ԿԻՑ, ՇԵՆՔԻ ԾԱՎԱԼԻՑ ԴՈՒՐՍ ՇԵՆՔԻ  
ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԳՈՏՈՒՄ ՇՈՒՇԱՆ ՌԱՖԻԿԻ ԱՎԵՏԻԿՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ  
ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԲՆԱԿԱՐԱՆԸ ԵՎ ՍՏ. ԶՈՐՅԱՆ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 79  
ՇԵՆՔԻ ԹԻՎ 100 ԲՆԱԿԱՐԱՆՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ԻՆՔՆԱԿԱՄ  
ՁԵՎԱՓՈԽՈՒՄՆԵՐԸ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Շուշան Ռաֆիկի Ավետիկյանի լիազորված անձ Սամվել Գուրգենի Բայանդուրյանի 11.08.2023 թվականի թիվ 02/13672 դիմումը, 26.07.2023 թվականի լիազորագիրը, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 03072023-06-0004 վկայականը, «ԲՈԼՈՐ ՔԱՐ» համատիրության նախագահի կողմից տրված տեղեկանքը և արձանագրությունը, «Վանաձորի նախագծող» ՍՊԸ-ի կողմից 01.09.2023թ տրված շինությունների տեխնիկական վիճակի վերաբերյալ թիվ ՎՆ 1-291/23 Ի եզրակացությունը, ԱՐՄԵՆ ԻՍԱՀԱԿՅԱՆ ՌՈՒԴԻԿԻ ԱԶ-ի կողմից տրված շինությունների հատակագիծը, շինությունների բնութագիրը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 27-րդ, 28-րդ, 31-րդ կետերով, 32-րդ կետի բ) և գ) ենթակետերով և ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով՝ **որոշում եմ.**

1. Զանաչել օրինական Շուշան Ռաֆիկի Ավետիկյանին սեփականության իրավունքով պատկանող, այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը չխախտող, քաղաքացիների կյանքին ու առողջությանը վտանգ չսպառնացող, առանց քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումների իրականացված և հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք չառաջացնող, Վանաձոր համայնք, Վանաձոր քաղաքի Զորյան փողոց թիվ 79 շենքի ծավալից դուրս, շենքի սպասարկման գոտում, թիվ 100 բնակարանին կից 19.1 քմ ընդհանուր արտաքին մակերեսով (ներքին մակերեսը՝ 17.48քմ) ինքնակամ կառուցված բնակարանը և Զորյան փողոց թիվ 79 շենքի թիվ 100 բնակարանում կատարված թվով 6 ինքնակամ ձևափոխումը:

2. Սույն որոշման 1-ին կետում նշված 19.1 քմ ընդհանուր արտաքին մակերեսով (ներքին մակերեսը՝ 17.48քմ) մակերեսով ինքնակամ կառուցված բնակարանի օրինականացման համար սահմանված վճարը 18371 (տասնութ հազար չորս հարյուր յոթանասունմեկ) դրամ և թվով 6 ինքնակամ ձևափոխումների օրինականացման համար սահմանված վճարը՝ 19240 (տասնինը հազար երկու հարյուր քառասուն) դրամ գումարները 60-օրյա ժամկետում չվճարելու դեպքում սույն որոշումը կհամարվի ուժը կորցրած:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ  
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



Ա. ՓԵԼԵՇՅԱՆ



## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք  
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,  
info@vanadzor.am

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ

26 դեկտեմբերի 2023 թվականի N 2009

ՎԱՆԱԶՈՐ ՔԱՂԱՔԻ ՆԱԻՐԻ ՓՈՂՈՑ ԹԻՎ 10/2-7/4 ԵՎ ԹԻՎ 10/2  
ՀԱՍՑԵՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ԱՄԱՐԱ ԼԱՎՐԵՆՏԻ ՊԵՏՐՈՍՅԱՆԻՆ  
ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ԵՎ  
ՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ՄԵԿ ԳՈՒՅՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐ ՄԻԱՎՈՐԵԼՈՒ ԵՎ  
ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Ամարա Լավրենտիի Պետրոսյանի լիզորված անձ Արա Արծրունու Կարապետյանի դիմումը, 05.02.2020թ. թիվ 311 (նոտարական ակտի կոդ: 775-20200204-79-4447627) լիզորագիրը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 10072020-06-0028 և թիվ 15062018-06-0062 վկայականները, 14.11.2022թ. տրված թիվ 63 և թիվ 64 ավարտական ակտերը (շահագործման թույլտվություն), «ԳԱՍՊԱՐ ՎԵՔԻԼՅԱՆ» ԱԶ-ի կողմից տրված հողամասի, շինությունների հատակագիծը, շինությունների բնութագիրը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 2-րդ ենթակետով՝ **որոշում եմ.**

- Միավորել Վանաձոր քաղաքի Նաիրի փողոց թիվ 10/2-7/4 և թիվ 10/2 հասցեներում գտնվող Ամարա Լավրենտիի Պետրոսյանին սեփականության իրավունքով պատկանող 0.05597 հա ընդհանուր մակերեսով հողամասերը և 502.95քմ ընդհանուր մակերեսով շինությունները՝ համաձայն «ԳԱՍՊԱՐ ՎԵՔԻԼՅԱՆ» ԱԶ-ի կողմից տրված հատակագծի:
- Սույն որոշման 1-ին կետում նշված գույքին տրամադրել փոստային հասցե՝ Վանաձոր Վանաձոր ք., Նաիրիի փողոց, 10/2 հյուրատուն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ  
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



Ա. ՓԵԼԵՇՅԱՆ



## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք  
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.iori@mta.gov.am,  
info@vanadzor.am

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ

26 դեկտեմբերի 2023 թվականի N 2010

ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔ ՎԱՆԱԶՈՐ ՔԱՂԱՔԻ ՏԱՐՈՆ-4  
ՄԵՔԵՆԱՇԽՆԱՐԱՐՆԵՐԻ ԹԱՂԱՄԱՍ 14Վ ՇԵՆՔԻ ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ՄԱՍՈՒՍ  
ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻՆ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՅԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ  
ՎԱՆԱԶՈՐԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ 05 ՀՈՒՆԻՍԻ 2008 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 704  
ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՅՐԱԾ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Ալվարդ Սուրենի Ղուկասյանի (ծնված՝ 28.07.1957թ.) 23.03.2023թ. թիվ 02/4632 դիմումը, անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման թիվ 1901169 վկայականը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը/89777, ՏԱՐՈՆ ՄԵՐՈՐՅԱՆ ԱՁ-ի կողմից տրված հողամասի հատակագիծը, եզրակացությունը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածով՝ **որոշում եմ.**

- Վանաձոր համայնքի Վանաձոր քաղաքի Տարոն-4 Մեքենաշինարարների թաղամաս 14վ շենքի հյուսիսային մասում գտնվող հողամասին տրամադրել նոր փոստային հասցե՝ Վանաձոր համայնք, Վանաձոր ք., Տարոն-4 Մեքենաշինարարների թաղամաս, 14/18 հողամաս:
- Ուժը կորցրած ճանաչել Վանաձորի քաղաքապետի 05 հունիսի 2008թ «Ալվարդ Ղուկասյանին հողամաս տրամադրելու մասին» թիվ 704 որոշումը՝ լուծելով 2008 թվականի հունիսի 05-ի համայնքային սեփականության հանդիսացող հողամասի վարձակալության (մրցույթով) թիվ 432 պայմանագիրը:
- Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հաշվառման, հավաքագրման և գովազդի բաժնին՝ կատարել Վանաձոր քաղաքի Տարոն-4 Մեքենաշինարարների թաղամաս 17/5-1 հասցեում գտնվող հողամասի վճարների վերահաշվարկ և վերջնահաշվարկ:
- Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարության, անձնակազմի կառավարման բաժնին՝ սույն որոշման մեկ օրինակը ուղարկել ՀՀ կադաստրի կոմիտեի Լոռու մարզային ստորաբաժանում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ  
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



Ա. ՓԵԼԵՇՅԱՆ



## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք  
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,  
info@vanadzor.am

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ

26 դեկտեմբերի 2023 թվականի N 2011

ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔ, ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔ, Հ. ՆԵՐՍԻՍՅԱՆ ՓՈՂՈՑ 1-ԻՆ  
ՓԱԿՈՒՂԻ 1/19 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ  
ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՃԱՆԱԶՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԸ ՆԱՐԵԿ ԱՐՄԵՆԱԿԻ  
ԱՌԱՔԵԼՅԱՆԻՆ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ  
ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Նարեկ Արմենակի Առաքելյանի 14.12.2023 թվականի թիվ 22356 դիմումը, Վանաձոր համայնքի անվամբ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 04122023-06-0046 վկայականը, Վանաձոր համայնքի ավագանու 29 նոյեմբերի 2023 թվականի թիվ 48 որոշումը, ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 481-րդ հոդվածով և 76-րդ հոդվածի 2-րդ մասով, ՀՀ կառավարության 12.04.2001թ. թիվ 286 որոշմամբ հաստատված կարգի 46.2-րդ մասի ա) ենթակետով, Վանաձոր համայնքի ավագանու 25 նոյեմբերի 2020 թվականի թիվ 114-Ն որոշմամբ հաստատված թիվ 2 հավելվածի 15-րդ կետով՝ **որոշում եմ.**

1. Վանաձոր համայնք, Վանաձոր քաղաքի Հ. Ներսիսյան փողոց 1-ին փակուղի 1/19 հասցեում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող, ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի թվին դասվող 19,8քմ մակերեսով հողամասը, համաձայն Վանաձոր համայնքի անվամբ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 04122023-06-0046 վկայականի, կառուցապատման իրավունքով, 10 տարի ժամկետով տրամադրել Նարեկ Արմենակի Առաքելյանին ավտոտնակ տեղադրելու նպատակով:

2. Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հաշվառման, հավաքագրման և գովազդի բաժնին՝ Նարեկ Արմենակի Առաքելյանի հետ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կնքել 19,8քմ մակերեսով հողամասի կառուցապատման իրավունքի տրամադրման պայմանագիր՝ 1.0քմ մակերեսով հողամասի համար ամսական վճարը սահմանելով 18 (տասնութ) ՀՀ դրամ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ  
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



Ա. ՓԵԼԵՇՅԱՆ



## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵՎԱԿԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք  
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.ori@mta.gov.am,  
info@vanadzor.am

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ

26 դեկտեմբերի 2023 թվականի N 2012

ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ Մ. ՀԵՐԱՑՈՒ ՓՈՂՈՑ 7/7 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ,  
ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՃԱՆԱԶՎԱԾ ԱՎՏՈՏՆԱԿԸ ԵՎ  
ԴՐԱՆՈՎ ԶԲԱՂԵՑՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԸ ԿԱՐԻՆԵ ԹԵԼՄԱՆԻ ԹՈՒՄԱՆՅԱՆԻՆ  
ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Կարինե Թելմանի Թումանյանի 19.05.2022թ. թիվ 4156 դիմումը, Վանաձոր համայնքի անվամբ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 24102023-06-0047 վկայականը, 26.04.2023թ. Վանաձոր համայնքի ավագանու թիվ 33 որոշումը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 34.2-րդ կետով և 35-րդ կետի դ) և ե) ենթակետերով՝ **որոշում եմ.**

1. Վանաձոր քաղաքի Մ. Հերացու փողոց 7/7 հասցեում գտնվող, Վանաձոր համայնքի սեփականությունը ճանաչված 21.4քմ արտաքին մակերեսով (ներքին մակերեսը՝ 19.4քմ) ավտոտնակը 80700 (ութսուն հազար յոթ հարյուր) դրամով և դրանով զբաղեցված ու սպասարկման համար անհրաժեշտ, ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի թվին չդասվող 21.4քմ մակերեսով հողամասը 532620 (հինգ հարյուր երեսուներկու հազար վեց հարյուր քսան) դրամով, ուղղակի վաճառքի ձևով օտարել Կարինե Թելմանի Թումանյանին:

2. Վանաձորի համայնքի ղեկավարին՝ Կարինե Թելմանի Թումանյանի հետ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կնքել ավտոտնակի և հողամասի առուվաճառքի պայմանագիր, իսկ աշխատակազմի եկամուտների հաշվառման, հավաքագրման և գովազդի բաժնին հաշվառել վերոնշյալ պայմանագիրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵՎԱԿԱՐ  
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



Ա. ՓԵԼԵՇՅԱՆ



## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք  
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.ori@mta.gov.am,  
info@vanadzor.am

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ

26 դեկտեմբերի 2023 թվականի N 2013

ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ, ՎԱՆԱԶՈՐ ՔԱՂԱՔԻ ԳՐ. ԼՈՒՍԱՎՈՐՋԻ ՓՈՂՈՑ  
ԹԻՎ 39/10 ՀԱՍՅԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ  
ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՅՈՂ ԱՎՏՈՏՆԱԿԸ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ  
ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հասմիկ Ամատունու Դարչինյանի լիազորված անձ Սերգեյ Աշոտի Հարությունյանի 28.02.2023 թվականի թիվ 3218 դիմումը, 05.02.2023 թվականի թիվ 1200 լիազորագիրը (նոտարական ակտի կոդ: 453-20230205-79-6649980), ՀՀ Լոռու մարզի Վանաձոր քաղաքի գլխավոր հատակագծի լրամշակման նախագիծը, Վանաձոր համայնքի անվամբ անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման թիվ 1870414 վկայականը, ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 8-րդ հոդվածի 1-ին մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 43-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 14<sup>3</sup>-րդ հոդվածի 11, 12, 13, 14 մասերով, ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 33-րդ կետով՝ **որոշում եմ.**

1. Ճանաչել օրինական Վանաձոր քաղաքի Գր. Լուսավորչի փողոց թիվ 39/10 հասցեում գտնվող, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված օրինականացման պայմաններին համապատասխանող, Վանաձոր համայնքի սեփականությունը ճանաչված 22.0քմ մակերեսով բնակելի գործառնական նշանակությամբ ավտոտնակը:

2. Փոխել Գր. Լուսավորչի փողոց թիվ 39/10 հասցեում գտնվող 0.00226 հա մակերեսով հողամասի գործառնական նշանակությունը հասարակական կառուցապատման հողերից բնակելի կառուցապատման հողերի:

3. Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հաշվառման, հավաքագրման և գովազդի բաժնին՝ 5-օրյա ժամկետում դիմել ՀՀ կադաստրի կոմիտեի Լոռու մարզային ստորաբաժանում՝ սույն որոշման 1-ին կետում նշված ինքնակամ կառուցված ավտոտնակի և դրանով զբաղեցված ու սպասարկման համար անհրաժեշտ, ՀՀ Լոռու մարզի Վանաձոր քաղաքի գլխավոր հատակագծի լրամշակման նախագծի համաձայն ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի թվին չդասվող 22.0քմ

մակերեսով հողամասի նկատմամբ համայնքի սեփականության իրավունքի պետական գրանցում կատարելու համար:

4. Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության բաժնի պետ-գլխավոր ճարտարապետ Ս.Աբովյանին՝ սույն որոշման 1-ին կետում նշված գույքի նկատմամբ համայնքի սեփականության իրավունքի գրանցումից հետո 15 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր առաջարկել սույն որոշման 1-ին կետում նշված ավտոտնակի ինքնակամ կառուցումը իրականացրած անձին ավտոտնակը և հողամասը վարձակալելու վերաբերյալ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ  
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2023թ. դեկտեմբերի 26  
ք. Վանաձոր



## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵՎԱԿԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք  
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 [vanadzor.lori@mta.gov.am](mailto:vanadzor.lori@mta.gov.am),  
[info@vanadzor.am](mailto:info@vanadzor.am)

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ

26 դեկտեմբերի 2023 թվականի N 2014

ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՆԱԶՈՐ ՔԱՂԱՔԻ ԽՆՁՈՐՈՒՏ 2 ՓՈՂՈՑ ԹԻՎ 1/1  
(ՊԱՅՄԱՆԱԿԱՆ) ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ՈՒ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ  
ՄԱԿԱՐ ՀԵՆՐԻԿԻ ՎԱՐԴԱՆՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ  
ՃԱՆԱԶԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Մակար Հենրիկի Վարդանյանի (ծնված՝ 18.11.1966թ.) 10.10.2023թ. թիվ 02/17376 դիմումը, հանրային ծառայություններ մատուցող կազմակերպությունների եզրակացությունները, «ԳԱՍՊԱՐ ՎԵՔԻԼՅԱՆ» ԱԶ-ի կողմից տրված հողամասի և շինությունների հատակագիծը, շինությունների բնութագիրը, 07.10.2023թ. ՀՀ կադաստրի կոմիտեի կողմից տրված հաշվառման (չափագրման) տվյալների մուտքագրման տեղեկանքը (չափագրման տվյալների մուտքագրման ծածկագիր: 2023DJCZ4X), 31.10.2023թ «Վանաձորի նախագծող» ՍՊԸ-ի կողմից տրված թիվ ՎՆ 1- 389/23 Ի եզրակացությունը, փոխադարձ հաշվարկների ստուգման ակտը, 11.10.2023թ. տրված թիվ 5868 (նոտարական ակտի կոդ: 741-20231011-66-7370882), 11.10.2023թ. տրված թիվ 5867 (նոտարական ակտի կոդ: 741-20231011-66-7370877) և 11.10.2023թ. տրված թիվ 5876 (նոտարական ակտի կոդ: 741-20231011-66-7370903) հայտարարությունները, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման /127891/ քաղվածքը և հաշվի առնելով այն, որ Վանաձոր համայնքի Վանաձոր քաղաքի Խնձորուտ 2 փողոց թիվ 1/1 (պայմանական) հասցեում կառուցած բնակելի տունը և դրա զբաղեցրած ու սպասարկման համար անհրաժեշտ 397.0քմ մակերեսով հողամասը չեն գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի և ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին, չեն առաջացնում սերվիտուտ: Բնակելի տունը կառուցվել է 1990թ. և դրա կառուցման ու սպասարկման համար անհրաժեշտ 397.0քմ մակերեսով հողամասը զբաղեցվել և շահագործվում է սկսած 1990թ.-ից:

Ղեկավարվելով 10.06.2008թ. «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով, ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով՝ **որոշում եմ.**

1. Ճանաչել Մակար Հենրիկի Վարդանյանի սեփականության իրավունքը մինչև 2001թ. մայիսի 15-ը Վանաձոր համայնքի Վանաձոր քաղաքի Խնձորուտ 2 փողոց թիվ 1/1 (պայմանական) հասցեում կառուցված իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական

բնակելի տան կառուցման և սպասարկման համար անհրաժեշտ 397.0քմ մակերեսով հողամասի ու դրա վրա գտնվող բնակելի նշանակության բոլոր շինությունների նկատմամբ:

2. Հողամասի սահմանները որոշվում են համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով:

3. Վանաձոր համայնքի Վանաձոր քաղաքի հսնձորուտ 2 փողոց թիվ 1/1 (պայմանական) հասցեում կառուցված բնակելի տանը տրամադրել փոստային հասցե՝ Վանաձոր համայնք, Վանաձոր ք., հսնձորուտ թաղամասի 2-րդ փողոց, 16 բնակելի տուն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ  
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2023թ. դեկտեմբերի 26  
ք. Վանաձոր



## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք  
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.ori@mta.gov.am,  
info@vanadzor.am

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ

26 դեկտեմբերի 2023 թվականի N 2015

ՎԱՆԱԶՈՐ ՔԱՂԱՔԻ ՆԵՐՍԻՍՅԱՆ ՓՈՂՈՑ ՆՐԲԱՆՑՔ 7-1/5 ՀԱՍՑԵՈՒՄ  
ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻՆ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴԻԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Արման Արմենակի Սարգսյանի 13.12.2023 թվականի թիվ 22265 դիմումը, անշարժ գույքի սեփականության (օգտագործման) գրանցման թիվ 06062019-06-0016 վկայականը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը (133464), 07.12.2023 թվականի անշարժ գույքի առուվաճառքի 7204 պայմանագիրը (նոտարական ակտի կոդ:594-20231207-205-7531887), ղեկավարվելով ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով՝ **որոշում եմ.**

Վանաձոր քաղաքի Ներսիսյան փողոց նրբանցք 7-1/5 հասցեում գտնվող հողամասին տրամադրել նոր փոստային հասցե՝ Վանաձոր համայնք, Վանաձոր ք., Հ. Ներսիսյան փողոց, 1-ին նրբանցք, 7/5 հողամաս:

ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐԻ  
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2023թ. դեկտեմբերի 26  
Ք. Վանաձոր



## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք  
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,  
info@vanadzor.am

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ

26 դեկտեմբերի 2023 թվականի N 2016

ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ԲՈՒԼՂԱՐԱԿԱՆ 2-ՐԴ ԱՎԱՆ, ԹԻՎ 98 (ՊԱՅՄԱՆԱԿԱՆ)  
ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ՈՒ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԱԼՎԱՐԴ ՍԵՐԺԻԿԻ  
ԱՄԻՐԽԱՆՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱԶԵԼՈՒ,  
ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ԵՎ  
ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Ալվարդ Սերժիկի Ամիրխանյանի (ծնված՝ 06.08.1956թ.) դիմումը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը, հանրային ծառայություններ մատուցող կազմակերպությունների եզրակացությունները, 05.10.2023թ. տրված թիվ 5497 (նոտարական ակտի կոդ: 594-20231005-66-7353574), թիվ 5496 (նոտարական ակտի կոդ: 594-20231005-66-7353563) և թիվ 5495 (նոտարական ակտի կոդ: 594-20231005-66-7353569) հայտարարությունները, Փոխադարձ հաշվարկների ստուգման ակտը, 20.11.2023թ. «Վանաձորի նախագծող» ՍՊԸ-ի կողմից տրված շինությունների տեխնիկական վիճակի վերաբերյալ թիվ ՎՆ1-414/23 Ի եզրակացությունը, 24.11.2023թ. ՀՀ կադաստրի կոմիտեի տրված հաշվառման (չափագրման) տվյալների մուտքագրման տեղեկանքը (չափագրման տվյալների մուտքագրման ծածկագիր: 2023RXKNXS), «ԱՐՍԵՆ ԻՍԱՀԱԿՅԱՆ ՌՈՒԴԻԿԻ» ԱԶ-ի կողմից տրված տեղագրական հատակագիծը և հաշվի առնելով այն, որ Վանաձոր քաղաքի Բուլղարական 2-րդ ավան, թիվ 98 (պայմանական) հասցեում կառուցված բնակելի տունը և դրա զբաղեցրած ու սպասարկման համար անհրաժեշտ 169.25քմ մակերեսով հողամասը չեն գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի և ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին, չեն առաջացնում սերվիտուտ: Բնակելի տունը կառուցվել է 1990թ., դրա կառուցման և սպասարկման համար անհրաժեշտ 169.25քմ մակերեսով հողամասը զբաղեցվել և շահագործվում է սկսած 1990թ.-ից:

Ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 8-րդ հոդվածի 1-ին մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 14<sup>3</sup>-րդ հոդվածի 11, 12, 13, 14 մասերով, 10.06.2008թ. «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով, ՀՀ կառավարության 2021թ. փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով՝ **որոշում եմ.**

1. Ճանաչել Ալվարդ Սերժիկի Ամիրխանյանի սեփականության իրավունքը մինչև 2001թ. մայիսի 15-ը Վանաձոր քաղաքի Բուլղարական 2-րդ ավան, թիվ 98 (պայմանական) հասցեում

կառուցված իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տան կառուցման և սպասարկման համար անհրաժեշտ 169.25քմ մակերեսով հողամասի և դրա վրա գտնվող բնակելի նշանակության բոլոր շինությունների նկատմամբ :

2. Փոխել Վանաձոր քաղաքի Բուլղարական 2-րդ ավան, թիվ 98 (պայմանական) հասցեում գտնվող 0.004502հա մակերեսով հողամասի գործառնական նշանակությունը՝ բնակավայրերի նպատակային նշանակության այլ հողերից՝ բնակելի կառուցապատման հողերի:

3. Հողամասի սահմանները որոշվում են համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով:

4. Սույն որոշման 1-ին կետում նշված գույքին տրամադրել փոստային հասցե՝ Վանաձոր համայնք, Վանաձոր ք., Բուլղարական ավան 2-րդ թաղամաս, թիվ 98 բնակելի տուն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ  
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2023թ. դեկտեմբերի 26  
ք.Վանաձոր



## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք

Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.ori@mta.gov.am, info@vanadzor.am

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ

26 դեկտեմբերի 2023 թվականի N 2017

ՎԱՆԱՁՈՐԻ ՀԱՄԱՅՆՔ ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՆԱՐԵԿԱՑՈՒ ՓՈՂ ԹԻՎ 56Ա  
ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ԶԱՆԻԿ ՄԵԽԱԿԻ ԲԱԼՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ  
ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ  
ԽԱՆՈՒԹՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ  
ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Զանիկ Մեխակի Բալյանի 24.11.2023թ. թիվ 02/20771 դիմումը, անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման թիվ 1929042 վկայականը, ԱՐՍԵՆ ԻՍԱՀԱԿՅԱՆ ՌՈՒԴԻԿԻ ԱԶ-ի կողմից տրված հողամասի և շինությունների հատակագծերը, շինությունների բնութագիրը, «Վանաձորի նախագծող» ՍՊԸ-ի կողմից 29.11.2023թ. տրված շինությունների տեխնիկական վիճակի վերաբերյալ թիվ ՎՆ 1-438/23 Ի եզրակացությունը, ՀՀ կադաստրի կոմիտեի կողմից 27.11.2023թ. տրված հաշվառման (չափագրման) տվյալների մուտքագրման տեղեկանքը (չափագրման տվյալների մուտքագրման ծածկագիր: 2023R65UFG), անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը 131290, ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 9-րդ, 10-րդ, 11-րդ, 17-րդ կետերով և 18-րդ կետի բ) ենթակետով, ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով՝ **որոշում եմ.**

1. Ճանաչել օրինական Վանաձոր համայնքի, Վանաձոր քաղաքի Նարեկացու փող թիվ 56ա հասցեում գտնվող, Զանիկ Մեխակի Բալյանին սեփականության իրավունքով պատկանող հողամասում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը չխախտող, քաղաքացիների կյանքին ու առողջությանը վտանգ չսպառնացող, ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներից դուրս, առանց քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումների իրականացված և հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք չառաջացնող ինքնակամ կառուցված 36.0քմ արտաքին մակերեսով (ներքին մակերեսը՝ 29.68քմ) խանութը՝ համաձայն հատակագծի:

2. Զանիկ Մեխակի Բալյանի կողմից օրինականացման համար սահմանված վճարը՝ 36.0քմ արտաքին մակերեսով շինությունների համար 141770 (հարյուր քառասունմեկ հազար յոթ հարյուր յոթանասուն) դրամ գումարը 60-օրյա ժամկետում չվճարելու դեպքում սույն որոշումը կհամարվի ուժը կորցրած:

3. Սույն որոշման 1-ին կետում նշված գույքին տրամադրել նոր փոստային հասցե՝ Վանաձոր համայնք, Վանաձոր ք., Գ. Նարեկացու փողոց, 1/7 խանութ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ  
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



Ա. ՓԵԼԵՇՅԱՆ



## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք  
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,  
info@vanadzor.am

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ

26 դեկտեմբերի 2023 թվականի N 2018

ՎԱՆԱԶՈՐ ՔԱՂԱՔԻ ՄՅԱՍՆԻԿՅԱՆ ՓՈՂՈՑ ԹԻՎ 6 ՇԵՆՔԻ ԱՐԵՎՄՏՅԱՆ  
ՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՄԱՌԱՆԻ ԵՎ ԴՐԱՆՈՎ ԶԲԱՂԵՑՎԱԾ ՈՒ  
ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԱՆԱԶՈՐ  
ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՃԱՆԱԶԵԼՈՒ, ՄԱՌԱՆ  
ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՓՈՍԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Արմինե Գարեգինի Գագինյան 23.11.2021թ. թիվ 16615 դիմումը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը/17800/, հանրային ծառայություններ մատուցող կազմակերպությունների եզրակացությունները, ՍԱՐԳԻՍ ԹԱՄԱԶՅԱՆ ԱԶ-ի կողմից տրված հողամասի և շինությունների հատակագծերը, շինությունների բնութագիրը, 19.12.2023թ. «Վանաձորի նախագծող» ՍՊԸ-ի կողմից տրված շինությունների տեխնիկական վիճակի վերաբերյալ թիվ ՎՆ1-112/23 ա եզրակացությունը, 29.11.2023թ. Վանաձոր համայնքի ավագանու թիվ 46 որոշումը ղեկավարվելով ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 731-Ն որոշմամբ հաստատված կարգով, ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 33-րդ կետով, ՀՀ կառավարության 2021թ. փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով՝ **որոշում եմ.**

1. Ճանաչել Վանաձոր համայնքի սեփականության իրավունքը Վանաձոր քաղաքի Մյասնիկյան փողոց թիվ 6 շենքի արևմտյան մասում ինքնակամ կառուցված, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված օրինականացման պայմաններին համապատասխանող 18.75քմ արտաքին մակերեսով (ներքին մակերեսը՝ 16.7քմ) մառանի և դրանով զբաղեցված ու սպասարկման համար անհրաժեշտ, ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի թվին չդասվող 28.0քմ մակերեսով հողամասի նկատմամբ՝ համաձայն հատակագծի:

2. Ճանաչել օրինական սույն որոշման 1-ին կետում նշված բնակելի գործառնական նշանակությամբ ինքնակամ կառույցը:

3. Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հավաքագրման, հաշվառման և գովազդի բաժնին՝ 5-օրյա ժամկետում դիմել ՀՀ կադաստրի կոմիտեի Լոռու մարզային ստորաբաժանում՝ սույն որոշման 1-ին կետում նշված ինքնակամ կառուցված մառանի և դրանով զբաղեցված ու սպասարկման համար անհրաժեշտ հողամասի նկատմամբ համայնքի սեփականության իրավունքի պետական գրանցում կատարելու համար:

4. Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության բաժնի պետ Ս. Աբովյանին՝ սույն որոշման 1-ին կետում նշված գույքի նկատմամբ համայնքի սեփականության իրավունքի գրանցումից հետո 15 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր առաջարկել սույն որոշման 1-ին կետում նշված շինության ինքնակամ կառուցումը իրականացրած անձին մատանը և հողամասը ուղղակի վաճառքի ձևով օտարելու վերաբերյալ:

5. Վանաձոր քաղաքի Մյասնիկյան փողոց թիվ 6 շենքի արևմտյան մասում գտնվող գույքին տրամադրել փոստային հասցե՝ Վանաձոր համայնք, ք. Վանաձոր, Ա. Մյասնիկյան փողոց թիվ 6/6 մառան:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ  
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2023թ. դեկտեմբերի 26  
ք.Վանաձոր



## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք  
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,  
info@vanadzor.am

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ

26 դեկտեմբերի 2023 թվականի N 2019

ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ «ԳԱՐԻԿ ԳԵՎՈՐԳՅԱՆ»-Ի ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ  
ՏԱՐԱԾՔՈՒՄ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՎԱԶԴ ՏԵՂԱԴՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ԵՎ  
ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով անհատ ձեռնարկատեր «ԳԱՐԻԿ ԳԵՎՈՐԳՅԱՆ»-ի 2023 թվականի դեկտեմբերի 25-ի թիվ 01/23158 հայտը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 45-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետով և «Գովազդի մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ պարբերությամբ՝ **որոշում եմ**.

